

Եվրոպական դատարանի պրակտիկան և ընթացակարգը: Մինչեվ ընդունելիության մասին որոշման ընդունումը

2.1. ԴԱՏԱՐԱՆ ԳԱՆԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ունի գանգատի հատուկ ձևաթուղթ, որը պետք է օգտագործեն դիմողներն իրենց գանգատները Դատարան ներկայացնելիս: Հիշյալ ձևաթուղթը ներկայացված է հավելված 4-ում:

Դիմողը պետք է լրացնի գանգատի այդ ձևաթուղթը (տե՛ս Գանգատի ձևաթուղթը լրացնելու կարգը ստորև՝ 2.4.4.-ում), սակայն գործնականում սկզբնական փուլում Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ կարելի է ներկայացնել պարզապես նամակի միջոցով: Եթե գանգատը ներկայացվում է նամակի միջոցով, ապա Դատարանը, սովորաբար, պահանջում է, որ դիմողը լրացված գանգատի ձևաթուղթը ներկայացնի Դատարան՝ գանգատի ստացումը հաստատող նամակի ամսաթվից հետո վեց շաբաթվա¹ ընթացքում (տե՛ս հավելված 6-ը): Փաստաբանները նաև պետք է ծանոթանան Վարույթի բացման հարցերին նվիրված՝ Դատարանի պրակտիկայի մասին ուղեցույցի², ինչպես նաև Դատարանի 45-րդ և 47-րդ կանոններին (տե՛ս հավելված 3-ը):

Դատարանին կարելի է կապվել հետևյալ հասցեով և հեռահաղորդակցության միջոցներով.

Քարտուղար
Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ Սեդեքս
Ֆրանսիա

Հեռախոս՝ (00) 333 88 41 20 18
Ֆաքս՝ (00) 333 88 41 27 30
Ինտերնետային կայք՝ www.echr.coe.int

Նամակի միջոցով գանգատը ներկայացնող փաստաբանը պետք է նշի դիմող(ներ)ի անձնական տվյալները, հակիրճ շարադրի Դատարան ներկայացվող խնդրին վերաբերող փաստերը, անդրադառնա դիմողի գործով (կամ այլ կերպ դիմողի գործին առնչություն ունեցած) ներպետական վարույթներին, նշի Կոնվենցիայի այն հոդվածները, որոնք դիմողի պնդմամբ խախտվել են, ինչպես նաև Դատարան գանգատ ներկայացնելու նպատակը: Այս փուլում բավարար տեղեկություններ չներկայացնելը կարող է հանգեցնել գանգատն անընդունելի ճանաչելուն՝ վեցամսյա ժամկետը խախտելու հիմքով³:

Հնարավոր է, որ նախնական նամակը Դատարան ներկայացնելու ժամանակ դիմողի ներկայացուցիչն իր տրամադրության տակ ունենա ոչ լիարժեք տեղեկություններ: Կոնվենցիայի խախտումների վերաբերյալ գանգատները կարող են պարունակել մի շարք ասպեկտներ: Օրինակ՝ պետք է միշտ հաշվի առնել, որ հոդված 13-ով պահանջվում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի առկայություն՝ կապված Կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքների հետ, իսկ հոդված 14-ն արգելում է խտրականությունը Կոնվենցիայի այլ իրավունքների իրականացման առնչությամբ: Եթե Կոնվենցիայի վիճարկվող հոդվածների շրջանակի վերաբերյալ գոյություն ունեն կասկածներ, իհարկե խորհուրդ է տրվում նամակը կազմել հնարավորինս

¹ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 4:

² Հրապարակված է 01.11.03թ.:

³ *Լատիֆը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Latif and other v. UK)*, թիվ.72819/01, որոշում 29.1.04:

ընդգրկում, հակառակ դեպքում դիմողի պահանջի որևէ տարրի բացթողման հետևանքը կարող է լինել այն, որ այդ հարցը կճանաչվի անընդունելի՝ վեցամսյա ժամկետը խախտելու հիմքով: Ստորև առաջարկվում է նախնական նամակի մի տարբերակ:

Ֆաքսով և փոստով

Քարտուղարին
Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ Սեդեքս
Ֆրանսիա

[ամսաթիվ]

Հարգելի պարոն/տիկին

[Դիմող] ընդդեմ [Պատասխանող պետություն]

Ես ներկայացնում եմ [Դիմողին], որը բնակվում է [հասցե] և գրում եմ Դատարան՝ նրա անունից ներկայացնելու գանգատ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 34-ի համաձայն:

[Ամսաթիվ] դիմողը, մի քանի հազար այլ մարդկանց հետ մասնակցել է [քաղաքի] կենտրոնում կազմակերպված պատերազմի դեմ ուղղված խաղաղ ցույցին: Նա երթով անցել է [Ա կետից] [Բ կետ]-ը, ուր հասել է ժամը 3-ին:

Կեսօրին, 3:15-ին, երբ նա քայլելով հեռանալիս է եղել հանրահավաքի վայրից, ըստ դիմողի պնդման, նրա վրա են հարձակվել երկու ոստիկան, որոնք մահալի հարվածներ են հացրել նրան և անարգել՝ անվանելով «գրողի տարած գնչու»: Հարձակման հետևանքով նա կրել է ծանր մարմնական վնասվածքներ:

Հաջորդ օրը դիմողի անունից բողոք է ներկայացվել [քաղաքի] պետական դատախազին, ով քրեական գործ է հարուցել:

Այնուամենայնիվ, դիմողը [ամսաթիվ] տեղեկացել է, որ քրեական գործով վարույթը կարճվել է [ամսաթիվ]՝ ապացույցների բացակայության պատճառով:

Դիմողը, վնասի հատուցման համար, քաղաքացիական հայց է ներկայացրել նաև [քաղաքի] ոստիկանության դեմ: Նրա հայցադիմումը մերժվել է [առաջին ատյանի դատարանի] կողմից [ամսաթիվ]: Դիմողի վերաքննիչ բողոքը նույնպես մերժվել է [վերաքննիչ դատարանի] կողմից [ամսաթիվ]: Իրավական պաշտպանության այլ միջոցներ առկա չեն:

Դիմողը պնդում է, որ հիշյալ գործով խախտվել է հոդված 3-ը (խոշտանգումների և անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելում), իր վրա՝ ոստիկանների կատարած հարձակման և դրան հետևած՝ իր բողոքը իրավասու մարմինների կողմից պատշաճ կարգով չքննելու հետևանքով: Նա նաև բողոքում է, որ հարձակման առնչությամբ իրեն հասու չեն եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, ինչը Կոնվենցիայի հոդված 13-ի խախտում է: Վերջապես, դիմողը պնդում է, որ ինքը խտրականության զոհ է դարձել էթնիկ փոքրամասնությանը պատկանելու՝ ռոմա համայնքի անդամ լինելու հիմքով, կապված իր վրա կատարած հարձակման և դրան հետևած իշխանությունների իրականացրած քննության հետ (Կոնվենցիայի հոդվածի 14-ի խախտում՝ 3-րդ և 13-րդ հոդվածների համակցությամբ):

Դիմողը Դատարանից պահանջում է ճանաչել, որ խախտվել են Կոնվենցիայի 3-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածները, ինչպես նաև տրամադրել արդարացի փոխհատուցում հոդված 41-ի հիման վրա (նյութական և ոչ նյութական վնասի համար, գումարած՝ իրավաբանական ծախսերն ու ծախքերը):

Սույն նամակը ներկայացվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելուց հետո վեցամսյա ժամկետում՝ համաձայն Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի:

Կից ներկայացվում է դիմողի կողմից պատշաճ կարգով ստորագրված Լիազորագիրը, որը հաստատում է նրա անունից հանդես գալու՝ իմ լիազորությունը:

Լրացված գանգատի ձևաթուղթը, համապատասխան փաստաթղթերի պատճենների հետ միասին, կներկայացվի հնարավորինս սեղմ ժամկետներում:

Խնդրում ենք հաստատել նամակի ստացումը:

Հարգանքներով,

Գանգատը Դատարան նամակով ներկայացնելու պրակտիկայի տարածված լինելը պայմանավորված է Կոնվենցիայի հոդված 35-ով ամրագրված ընդունելիության պահանջներով, մասնավորապես՝ այն վեցամսյա ժամկետով, որի սահմաններում գանգատը պետք է ներկայացնել Դատարան: Ընդունելիության կանոնները Կոնվենցիայի համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից են: Դատարանը հիմնականում խստորեն հետևում է ընդունելիության կանոններին և գործերի մի զգալի մասի չի հաջողվում անցնել ընդունելիության արգելքը: Օրինակ՝ 2003 թվականին Դատարանն անընդունելի է ճանաչել, կամ գործերի ցուցակից հանել է գանգատների 96 տոկոսը⁴:

Հետևաբար, Եվրոպական դատարան գանգատ ներկայացնել ցանկացող փաստաբանների համար էական է գործի ընդունելիության պահանջներին՝ ըստ ամենայնի տեղյակ լինելը: Ընդունելիության չափանիշներն առավել հանգամանալից քննարկվում են գլուխ 5-ում: Գործնականում, ընդունելիության երկու ամենակարևոր կանոնները փոխկապակցված են: Դրանք շարադրված են Կոնվենցիայի հոդված 35-ի 1-ին մասում և ամրագրում են, որ Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն դեպքում, երբ սպառված են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները (միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան) և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը: Եվրոպական դատարանի համակարգում արդեն իսկ ընդունված պրակտիկա է, որ վերոհիշյալ ձևով կազմված նամակը կանգնեցնում է վեցամսյա ժամկետի հաշվարկման ընթացքը⁵ (տե՛ս կանոն 47-ի 5-րդ կետը և Պրակտիկայի մասին ուղեցույցի 3-րդ կետը, հավելված 3-ում): Եթե չէք հասցնում տեղավորվել վեցամսյա ժամանակի սահմաններում, շատ ավելի հեշտ է նամակ ներկայացնել Դատարան, քան կազմել և ներկայացնել ամբողջական գանգատը՝ բոլոր օժանդակ փաստաթղթերով հանդերձ: Դատարան նախնական նամակ ներկայացնելը նշանակում է, որ դիմողն ունի ևս մի քանի շաբաթ գանգատի ձևաթուղթը ներկայացնելու համար:

Եվրոպական դատարան դիմել ցանկացողներից ոմանց համար կարող է բոլորովին էլ պարզ չլինել, թե արդյոք խախտված իրավունքների վերականգնման տվյալ միջոցը հոդված 35-ի իմաստով կհամարվի «ներպետական իրավական պաշտպանության միջոց»: Այս հարցն ավելի մանրամասն է քննարկվում ընդունելիության կանոններին նվիրված գլուխ 5-ում: Այնուամենայնիվ, եթե տվյալ «իրավական պաշտպանության միջոցի» արդյունավետության առնչությամբ կասկածներ կան, փաստաբաններին խորհուրդ է տրվում նախնական նամակ ներկայացնել Դատարան՝ իրենց պաշտպանյալի դիրքորոշումը պաշտպանելու համար: Եթե նման նամակ չի ուղարկվում, կա վտանգ, որ կառավարությունը կվիճարկի, որ դիմողը օգտվել է իրավական պաշտպանության մի միջոցից, որն «արդյունավետ» չի կարող համարվել հոդված 35-ի իմաստով և այդ պատճառով գանգատը պետք է անընդունելի ճանաչել՝ վեցամսյա ժամկետը լրանալուց հետո ներկայացվելու պատճառով: Օրինակ՝ Միացյալ Թագավորության կառավարությունն այս հարցը հաջողությամբ կարողացավ վիճարկել *Ռաֆայն ընդդեմ Միացյալ Թագավորության (Raphaie v UK)*⁶ գործում՝ անդելով, որ դիմողը օգտվել է քրեակատարողական հիմնարկի ներքին բողոքարկման

⁴ Տե՛ս Արձանագրություն թիվ 14-ի Բացատրական զեկույցի կետ 7-ը:

⁵ Տե՛ս, օրինակ, *Մեգին ընդդեմ Միացյալ Թագավորության (Magee v. UK)* գործը, Թիվ 28135/95, որոշում 14.9.99:

⁶ Թիվ 20035/92, որոշում 2.12.93:

համակարգից, որը «արդյունավետ» չէր: Հետևաբար, եթե փաստաբանները կասկածներ ունեն միջոցի «արդյունավետության» հարցում, նրանք ուղղակի պետք է հիշյալ միջոցից օգտվելու հետ մեկտեղ նախնական նամակ ներկայացնեն Դատարան: Դատարանը, որպես կանոն, չի պահանջում, որպեսզի այդ փուլում գանգատն ամբողջությամբ ներկայացվի, սակայն Դատարանին պետք է տեղյակ պահել իրավական պաշտպանության ներպետական միջոցներից օգտվելու հետ կապված ցանկացած զարգացման մասին: Ներպետական վարույթների ավարտից անմիջապես հետո գանգատն ամբողջությամբ պետք է ներկայացնել Դատարան:

Նախնական նամակը կամ գանգատի ձևաթուղթը կարելի է Դատարան ներկայացնել փոստով կամ ֆաքսով. ֆաքսով ուղարկելու դեպքում պետք է հնգօրյա ժամկետում ուղարկել նաև ստորագրված բնօրինակը⁷: Երկու դեպքում էլ, Դատարանը գանգատի ներկայացման ամսաթիվ է դիտում նամակի կամ ֆաքսով ուղարկված փաստաթղթի վրա նշված ամսաթիվը, այլ ոչ թե Դատարանի կողմից՝ դրանց ստացման ամսաթիվը: Շատ դեպքերում, Դատարանը, իհարկե, նամակները ստանում է դրանք ուղարկելուց մի քանի օր կամ նույնիսկ մի շաբաթ անց: Այնուամենայնիվ, լիովին պարզ է, որ հենց նամակի վրա նշված ամսաթիվն է, որ կանգնեցնում է վեցամսյա ժամկետի ընթացքը: Բացառիկ դեպքերում, երբ Դատարանը ստանում է նամակը դրա ենթադրվող ամսաթվից զգալի ժամանակ անց, վերջինս կարող է ավելի բժախնդիր լինել ժամկետների հարցում՝ նամակները հետին ամսաթվով ուղարկելու փորձերը կանխելու համար⁸:

Եվրոպական դատարան գանգատ կարելի է ներկայացնել նաև էլեկտրոնային փոստով⁹. դրա համար նախ անհրաժեշտ է Դատարանի քարտուղարությունից ստանալ էլեկտրոնային փոստի հասցեն: Այս մեթոդը նույնպես պատշաճ է համարվում, եթե, իհարկե, Դատարանն իրականում ստացել է էլեկտրոնային հաղորդագրությունը: Հետևաբար, խորհուրդ է տրվում էլեկտրոնային հաղորդագրությունից հետո ուղարկել նամակ՝ ֆաքսով կամ փոստով: Չնայած, նամակի միջոցով գանգատ ներկայացնելը խիստ տարածված պրակտիկա է, կան իրադրություններ, երբ դիմողը ցանկանում է սկզբից նեթ ներկայացնել ամբողջական գանգատը (տես Գանգատի ձևաթուղթը լրացնելու կարգը ստորև, 2.4.4-ում): Սա հնարավոր է այն դեպքում, երբ դիմողը ցանկանում է արագացնել Դատարանում վարույթը: Դա հնարավոր է նաև այն դեպքում, երբ դիմողը մտադիր է խնդրել Դատարանին գանգատի ապահովման միջոցներ կիրառել (համաձայն կանոն 39-ի), քանի որ Դատարանը, որպես կանոն, քննության է առնում գանգատի ապահովման միջոցների կիրառման հարցը միայն այն դեպքում, երբ ստացած է լինում գանգատի ձևաթուղթը: Գանգատի ապահովման միջոցների կիրառման ընթացակարգը արտակարգ ընթացակարգ է, որով Դատարանը գանգատի քննության ընթացքում կարող է պահանջել պատասխանող կառավարությանը ձեռնպահ մնալ որոշակի քայլերից կամ որոշակի քայլեր ձեռնարկել դիմողին պաշտպանելու նպատակով: Հիշյալ ընթացակարգը կիրառվում է միայն այն գործերով, որոնց առնչությամբ առկա է կյանքի համար անմիջական և լուրջ վտանգ: Այս խնդիրն առավել մանրամասն քննության է առնվում բաժին 2.4.10-ում:

2.1.1 Դատարանի կանոնակարգը և պրակտիկայի մասին ուղեցույցը

Դատարանի կանոնակարգի գործող տարբերակը, որը ուժի մեջ է մտնել 2003 թվականի նոյեմբերին, զետեղված է հավելված 3-ում: Կանոնակարգի առաջին տարբերակը, ուժի մեջ մտնելով 1998 թվականի նոյեմբերի 1-ին, փոփոխության ենթարկվեց 2000 թվականի դեկտեմբերի 8-ին (անմիջապես ուժի մեջ մտնելով), այնուհետև՝ 2002 թվականի հունիսի 17-ին և 2002 թվականի հուլիսի 8-ին (հիշյալ երկու փոփոխություններն ուժի մեջ են մտել 2002 թվականի հոկտեմբերի 1-ին): Ամենավերջին փոփոխությունները վավերացվել են 2003 թվականի հուլիսին և ուժի մեջ մտել

⁷ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 5:

⁸ Տե՛ս, օրինակ, *Արսլանն ընդդեմ Թուրքիայի (Arslan v Turkey)* գործը, թիվ 36747/02, որոշում 21.11.02, *Կադիկիսն ընդդեմ Լատվիայի (Kadikis v Latvia)* (Թիվ 2) գործը, թիվ 62393/00, որոշում 25.09.03:

⁹ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցման կանոններն ամրագրում են, որ համաձայն հոդված 34-ի՝ գանգատը պետք է ներկայացնել գրավոր: Այն հատուկ չի անդրադառնում էլեկտրոնային փոստից օգտվելու հարցին (ինպես որ Պրակտիկայի մասին ուղեցույցը անում է գանգատի ապահովման միջոցների կիրառման համար), սակայն գանգատներն էլեկտրոնային փոստով ընդունելը Դատարանի քարտուղարությունում ընդունված պրակտիկա է:

2003 թվականի նոյեմբերի 1-ին: Կանոնակարգը ներառում է Պրակտիկայի մասին երեք ուղեցույցներ՝ համաձայն 32-րդ կանոնի՝ գանգատի ապահովման միջոցների կիրառման *համար դիմելը*, *Վարույթի հարուցումը* և *Գրավոր միջնորդությունները* (նույնպես հավելված 3-ում): Սույն գլխում հղում է կատարվում հիշյալ կանոններին և Պրակտիկայի մասին ուղեցույցներին:

2.1.2 Լեզուները

Չնայած որ Դատարանի պաշտոնական լեզուներն անգլերենը և ֆրանսերենն են,¹⁰ նախնական նամակը կարելի է ուղարկել Կոնվենցիայի անդամ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի պաշտոնական լեզուներից մեկով: Փաստորեն, նախքան ընդունելիության մասին որոշումը Դատարանի հետ դիմողի անունից ցանկացած հաղորդակցություն (ներառյալ բոլոր գրավոր հայտարարությունները) կարելի է վարել անդամ պետությունների պաշտոնական լեզուներից ցանկացածով (Կանոն 34 (2)): Ընդունելիությունից հետո անդամ պետությունների պաշտոնական լեզուներից մեկը օգտագործել շարունակելու համար կողմերը պետք է ստանան Պալատի նախագահի թույլտվությունը¹¹. հակառակ դեպքում նրանցից կպահանջվի օգտագործել անգլերեն կամ ֆրանսերեն լեզուները (Կանոն 34 (3)): Պետությունները կամ երրորդ կողմը պարտավոր են օգտագործել անգլերենը կամ ֆրանսերենը, եթե Պալատի նախագահն այլ բան չի սահմանում (Կանոն 34(4)): Դատարանը, դիմողին աջակցելու նպատակով, կարող է պետությունից պահանջել, որպեսզի նա Դատարանին ներկայացնի իր առարկությունների թարգմանությունը իր պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Վկաները, փորձագետները և վարույթի այլ մասնակիցները կարող են օգտագործել իրենց մայրենի լեզուն, եթե բավարար մակարդակով չեն տիրապետում անգլերենին կամ ֆրանսերենին:

2.1.3 Ներկայացուցչություն

Պարտադիր չէ, որպեսզի գանգատը Եվրոպական դատարան ներկայացնողը լինի փաստաբան (Կանոն 36 (1)): Եվ իրոք, Դատարան ուղարկվող գանգատներից շատերը ներկայացվում են հենց դիմողների կողմից: Գանգատը նախնական փուլում ևս կարող է ներկայացվել «ներկայացուցչի միջոցով» (Կանոն 36 (1)), որն անպայման չէ, որ փաստաբան լինի:

Դատարանի պահանջն է, որ գործը պատասխանող կառավարությանը ծանուցելուց հետո դիմողը պետք է ներկայացված լինի փաստաբանի կողմից, ով մշտապես կամ առավելապես բնակվում է Եվրոպական կոնվենցիայի անդամ հանդիսացող որևէ պետությունում և այդ պետություններից որևէ մեկում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր ունի. հակառակ դեպքում, ներկայացուցիչը ստիպված է ձեռք բերել համապատասխան պալատի նախագահի թույլտվությունը (Կանոն 36 (4)(ա)): Ըստ այդմ՝ Կոնվենցիայի անդամ պետությունում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր ունեցող փաստաբանը դիմողին Դատարանում ներկայացնելու համար Դատարանի թույլտվության կարիքը չի ունենա, մինչդեռ, օրինակ, նման արտոնագիր չունեցող գիտնական-իրավաբանը պետք է դիմի Դատարան՝ թույլտվության համար: Ներկայացուցիչներից պահանջվում է Դատարան ներկայացնել լիազորագիր կամ գրավոր թույլտվություն՝ հաստատելու դիմողի անունից հանդես գալու իրենց լիազորությունը (Կանոն 45 (3)): Դատարանի կողմից մշակված լիազորագրի ձևը զետեղված է հավելված 5-ում:

Բացառիկ դեպքերում, երբ այդ են «պահանջում» «հանգամանքները» և ներկայացուցչի «վարքագիծը», Դատարանն իրավասու է որոշելու, որ նշանակված փաստաբանը չի կարող այլևս ներկայացնել դիմողին կամ օգնել վերջինիս, և որ դիմողը պետք է այլ ներկայացուցիչ փնտրի (Կանոն 36 (4)(բ)):

¹⁰ Կանոն (34 (1)):

¹¹ Տե՛ս, օրինակ, *Կլայնը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Kleyn and others v Netherlands)* գործը, Թիվ 39343/98, Թիվ 39651/98, Թիվ 43147/98 և Թիվ 46664/99, 6.5.03, (2004) 38 EHR 14, կետ 10:

2.2 ԾԱԽՍԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՎՃԱՐՆԵՐ

Եվրոպական դատարանում վարույթը տևում է առնվազն չորսից հինգ տարի (եթե գանգատները անցնում են ընդունելիության փուլը), իսկ որոշ գործերի համար պահանջվում է ավելի շատ ժամանակ: Չնայած վարույթի նման երկարատևությունը կարող են դիմողների համար մեծ հուսախաբությունների առիթ հանդիսանալ, մյուս կողմից Կոնվենցիայի համակարգը շատ ավելի մատչելի է և հարմար՝ դատավարության կողմերի համար, քան՝ ներպետական ատյանների:

2.2.1 Պատասխանող կառավարության ծախսերը

Հատկանշանակ է, որ Կոնվենցիայում չկա այնպիսի դրույթ, որի համաձայն դիմողը ցանկացած հանգամանքներում պարտավոր է վճարել պատասխանող կառավարության ծախսերը¹²: Հետևաբար, նույնիսկ, եթե դիմողը հետ է վերցնում գործը կամ կարգավորում է վեճը նախքան վճիռ ընդունելը, կամ էլ տանուլ է տալիս Դատարանում կայացած դատավարության արդյունքում, նրան չի կարելի ստիպել վճարել կառավարության կատարած ծախսերը: Սա կարող է էական գործոն լինել Եվրոպական դատարանի վարույթին ապավինելու հարցը որոշելիս: Այն դեպքում, երբ, կողմերը ներպետական վարույթներում տանուլ տալու դեպքում կանգնում են հակառակ կողմի բոլոր ծախսերը կամ դրանց մի մասը փոխհատուցելու հեռանկարի առաջ՝ համաձայն ընդունված կանոնի, ըստ որի իրադարձությանը հետևում են ծախսեր, Եվրոպական դատարանի պարագայում նման ռիսկ գոյություն չունի: Տեսակետ կա, որ սա շատ կարևոր հանգամանք է Կոնվենցիայի համակարգը նույնիսկ ամենակարիքավոր դիմողների համար հարաբերականորեն մատչելի դարձնելու համար:

2.2.2. Դիմողի ծախսերը

Պատասխանող կառավարությունից հնարավոր է ստանալ դիմողի ողջամիտ ծախսերի փոխհատուցումը՝ կամ վեճի կարգավորման շրջանակներում, կամ եթե Դատարանը որոշում է փոխհատուցել հաղթած դիմողի ծախսերը: Համաձայն Կոնվենցիայի հոդված 41-ի, եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում, այն կարող է «արդարացի փոխհատուցում» սահմանել դիմողի համար: Համաձայն հոդված 41-ի, ի լրումն նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցման, Դատարանը կարող է սահմանել դիմողի իրավական ծախսերի և ծախքերի փոխհատուցում: Դատարանը սահմանում է ծախսերի փոխհատուցում միայն այն դեպքում, եթե համոզվում է, որ դրանք իրականում և անհրաժեշտաբար կատարվել են և եթե գումարը ողջամտության սահմաններում է: Հետևաբար, բացարձակապես կարևոր է, որ փաստաբանները սկզբից ևեթ ճշգրտորեն արձանագրեն կատարված բոլոր ծախսերը և ծախքերը, և երբ քննարկվի ծախսերի հարցը, կարողանան Դատարանին տրամադրել դրանց մասին մանրամասն տեղեկանք: Փաստաբանները, հետևաբար, իրենց պաշտպանյալի նամակում գործի սկզբից ևեթ պետք է նշեն պաշտպանյալի՝ վճարելու պարտավորության մասին, որն ավելի ուշ, հարկ եղած դեպքում, կարելի է տրամադրել Դատարանին՝ ցույց տալու, որ դիմողն իրականում կրել է նշված ծախսերը: Դիմողի ծախսերի փոխհատուցման խնդիրն առավել հանգամանակից քննության է առնվում գլուխներ 4-ում և 9-ում:

Միացյալ Թագավորությունում ընդունված է, որ Եվրոպական դատարանում ներկայացուցչություն կարելի է իրականացնել պայմանական վարձատրության հիմունքներով: Հավելված 17-ում զետեղված է պայմանական վարձատրության պայմանագրի արդեն իսկ կիրառված օրինակ:

Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող մի շարք պետություններում դիմողները հնարավորություն ունեն իրենց փաստաբանների հետ կնքելու «պայմանով վարձատրության»

¹² Կանոն 43 (3)-ը սահմանում է, որ երբ գանգատը հանվում է գործերի ցուցակից (տե՛ս բաժին 3.3-ը ստորև), ծախսերը մնում են Դատարանի հայեցողությանը: Գործնականում Դատարանը դիմողից չի պահանջում վճարել կառավարության կատարած ծախսերը:

պայմանագիր, երբ պաշտպանյալը պարտավորվում է փաստաբանին վճարել Դատարանի կողմից դիմողի համար սահմանված ծախսերի փոխհատուցման գումարի որոշակի տոկոս: Սակայն Դատարանը կաշկանդված չէ նման պայմանագրերով¹³:

2.2.3 Դատական տուրքեր

Դատավարության որևէ փուլում դիմողը պարտավոր չէ տուրք վճարել Եվրոպական դատարանին: Եվրոպական դատարան դիմողները հնարավորություն ունեն փաստաբաններ ունենալ պայմանով վարձատրության հիմունքներով, ազատ են տուրքեր և կառավարության ծախսերը վճարելու պարտավորությունից, ինչը Եվրոպական դատարանում վարույթը շահեկանորեն տարբերում է ներպետական ատյաններում վարույթներից, որտեղ միշտ էլ առկա է ֆինանսական լարվածություն:

2.2.4 Իրավական օգնություն

Եվրոպական դատարանում վարույթի համար ներպետական աղբյուրներից իրավաբանական օգնություն հազվադեպ է տրամադրվում¹⁴: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանն ինքը սահմանափակ իրավաբանական օգնություն է տրամադրում ստրասբուրգյան դատավարության համար: Դատարանի վարույթի յուրաքանչյուր փուլում վճարվում է (Եվրոպական դատարանի կողմից) հաստատագրված փոքր չափի գումար: Իրավական օգնության վճարների (Եվրոյով արտահայտված) սանդղակը գետեղված է հավելված 10-ում: Գումարները սահմանափակ են և, որպես կանոն, նպատակ ունեն լրացնել դիմողի ծախսերը: Սակայն, եթե հատկացվում է իրավաբանական օգնություն, այն նաև ներառում է (դիմող(ներ)ի և նրանց ներկայացուցիչների համար) Դատարանի կողմից նշանակված ցանկացած լսումների համար Ստրասբուրգ ուղևորվելու նպատակով կրած ողջամիտ ծախսերը:

Իրավական օգնությունը չի հատկացվում նախքան Եվրոպական դատարանում վարույթի հարուցումը, կամ նույնիսկ գործը հարուցելու փուլում: Իրավական օգնություն ստանալու համար կարելի է դիմել միայն գանգատը կառավարությանը ծանուցելուց հետո: Եթե այդ փուլում շնորհվում է իրավաբանական օգնություն, դիմողն այնուհետև ստանում է համապատասխան հաստատագրված գումարը գանգատը ներկայացնելու համար: Իրավական օգնության հարցին առավել հանգամանալից անդրադառնում է բաժին 2.5.5-ը:

2.3 ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գոյություն ունեն մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք լուրջ փորձ ունեն Եվրոպական դատարան գանգատներ ներկայացնելու կամ դրանց վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու հարցում: Փաստաբանների համար օգտակար է այդ հասարակական կազմակերպություններին դիմելը՝ խորհրդատվության կամ Եվրոպական կոնվենցիայի նյութական կամ դատավարական իրավունքի հարցերով օգնություն ստանալու համար:

Մասնավորապես՝ երկու ՀԿ-ներ՝ «Լիբերթին»-ն և «ԷյԱյԱռԻ» (AIRE) կենտրոնը զգալի փորձ ունեն Եվրոպական դատարանի առջև դիմողներին ներկայացնելու հարցում: «Լիբերթին»-ն ներկայացնում է հիմնականում Միացյալ Թագավորության դեմ գանգատ ներկայացրած դիմողների շահերը: Կազմակերպության վերջին գործերից են՝

¹³ Տե՛ս Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի (*Iatridis v Greece*) գործը, թիվ 31107/96, 19.10.00, (2000) 30 EHRR 97, կետ 55:

¹⁴ Օրինակ՝ Դանիայի «Իրավական օգնության մասին» ակտը (Lov 1999 -12-20 nr. 940 om retshjælp til indgivelse og førelse af klagesager for internationale klageorganer i henhold til menneskerettighedskonventioner) թույլ է տալիս օգտվել անվճար իրավական օգնությունից մարդու իրավունքների խախտումների գործերով միջազգային վարությունների ժամանակ. տե՛ս Վասիլյեվան ընդդեմ Դանիայի (*Vasileva v Denmark*) գործը, թիվ 52792/99, 25.9.03, կետ 50:

- *Ռոուն և Դեյվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Rowe & Davis v UK)*¹⁵ գործը. հանրային շահերով պայմանավորված անձեռնմխելիություն և քրեական գործերով *ex parte* լուսններ,
- *Կաբալլեթրոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Cabalero v UK)*¹⁶ գործը. ծանր հանցագործության կատարելու համար դատապարտված, դատվածություն ունեցող բռնաբարության մեջ մեղադրվող անձի պարագայում գրավի ավտոմատ մերժում,
- *Սմիթը և Գրեյդին ընդդեմ Միացյալ Թագավորության (Smith and Grady v UK)*¹⁷ գործը. զինված ուժերում համասեռամուլների ծառայության արգելքը,
- *Սթիլը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Steel and other v UK)*¹⁸ գործը. խաղաղ ցուցարարների ձերբակալումը,
- *ՄքԼեոդն ընդդեմ Միացյալ Թագավորության (McLeod v UK)*¹⁹ գործը. ոստիկանության կողմից բնակարան ներխուժելը՝ հասարակական կարգի խախտումը կանխելու նպատակով,
- *Ֆոգարթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fogarty v UK)*²⁰ գործը. սեռական խտրականության գործով դատավարությանը խոչընդոտող պետական անձեռնմխելիություն,
- *Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Pretty v UK)*²¹ գործը. Պետական դատախազի կողմից դիմողի ամուսնուն քրեական հետապնդումից ազատող անձեռնմխելիության իրավունքի շնորհման մերժում, եթե վերջինս օգներ դիմողին ինքնասպանություն գործելու հարցում,
- *Էփլբայը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Appleby and other v UK)*²² գործը. բնապահպանական քարոզարշավի մասնակիցների հանդեպ կիրառված սահմանափակումներ, որոնք թույլ չէին տալիս նրանց թռուցիկներ բաժանել քաղաքի՝ մասնավոր սեփականություն հանդիսացող կենտրոնում:

«ԵյԱյԱռԻ» կենտրոնը խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրում փաստաբաններին, Քաղաքացիների խորհրդատվության բյուրոներին (CABs) և Միջազգային մարդու իրավունքների և եվրոմիության իրավունքի ոլորտում այլ ԶԿ-ներին այնքանով, որքանով խոսքը վերաբերում է առանձին անհատների: Կենտրոնը, իր Ընտանեկան իրավունքի ծրագրի շրջանակներում, նաև անհատական խորհրդատվություն է տրամադրում ընտանեկան իրավունքի ոլորտում: Կենտրոնի վերջին գործերի շարքին են դասվում՝

- *Թ.Պ-ն և Բ.Մ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (TP and KM v UK)*²³ գործը. հանրային քաղաքականության նկատառումներից ելնելով սոցիալական ծառայությունների դեմ անփութության մեղադրանք ներկայացնելը բացառելը,
- *Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Osman v UK)*²⁴ գործը. հանրային քաղաքականության ոլորտում ոստիկանական անձեռնմխելիության խնդիրը՝ անփութության մեղադրանքով վարույթում՝ կապված հանցագործության կանխարգելման և քննության հետ,
- *Քուքն ընդդեմ Ավստրայի (Cooke v Austria)*²⁵ գործը. քրեական դատավարությունում մեղադրյալի՝ Գերագույն դատարանում բանավոր լուսններին ներկա գտնվելու իրավունքի մերժում:

Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ԳԻԵԿ - ERRC) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող միջազգային իրավաբանական կազմակերպություն է, որը գործունեություն է

¹⁵ Թիվ 28901/95, 16.2.02, (2000) 30 EHRR 1:

¹⁶ Թիվ 32819/96, 8.2.00, (2000) 30 EHRR 643:

¹⁷ Թիվ 33985/96 և 33986/96, 27.9.99, (2000) 29 EHRR 493:

¹⁸ Թիվ 24838/94, 23.9.98, (1999) 28 EHRR 603:

¹⁹ Թիվ 24755/94, 23.9.98, (1999) 27 EHRR 493:

²⁰ Թիվ 37112/97, 21.11.01, (2002) 34 EHRR 12:

²¹ Թիվ 2346/02, 29.4.02, 29.4.02, (2002) 35 EHRR 1:

²² Թիվ 44306/98, 6.5.03, (2003) 37 EHRR 38:

²³ Թիվ 28945/95, 10.5.01, (2002) 34 EHRR 2:

²⁴ Թիվ 23452/94, 28.2.98, (2000) 29 EHRR 245:

²⁵ Թիվ 25878/94, 8.2.00:

իրականացնում գնչու էթնիկական պատկանելության տեր անձանց դեմ ուղղված ռասիստական և մարդու իրավունքների այլ ոտնձգությունների դեմ պայքարի ոլորտներում: Կազմակերպության հիմնական շեշտադրումը ռազմավարական դատավարությունը որպես սոցիալական փոփոխության և Եվրոպայի ամբողջ տարածքում գնչուների վիճակի բարելավման գործիք օգտագործելն է: Իր ուժերով կամ տեղացի գործընկերների հետ համատեղ «ԳԻԵԿ»-ը գործեր է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ինչպես նաև Միացյալ ազգերի կազմակերպության հովանու տակ գործող անհատական բողոքարկման տարբեր մեխանիզմներին: Օրինակ՝ վերջին տարիների ընթացքում «ԳԻԵԿ»-ն իր մասնակցությունն է ցուցաբերել հետևյալ գործերում՝

- *Ասսենովն ընդդեմ Բուլղարիայի (Assenov V Bulgaria)*²⁶ գործը. երրորդ կողմի մասնակցությունը հողված 3-ի համաձայն գործը քննելու պարտականության առնչությամբ,
- *Նաչովան ընդդեմ Բուլղարիայի (Nachova v Bulgaria)*²⁷ գործը. «ԳԻԵԿ»-ը միջամտել է խտրականության գործերում ապացուցման ստանդարտների և ապացուցման պարտավորության առնչությամբ:

«Մենորիալը» և Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնը (ՄԻՊԵԿ-EHRAC)²⁸ խորհրդատվություն են տրամադրում Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից դիմողներին, ներառյալ նաև Չեչնիային վերաբերող գործերով դիմողներին: Օրինակ՝ «Մենորիալը» և «ՄԻՊԵԿ»-ը ներկայացնում են Չեչնիայից²⁹ առաջին անգամ ընդունելի ճանաչված գործերով դիմողներին. նրանց այլ գործերը ներառում են *Ֆադեյեվան ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v Russia)*³⁰ գործը: «Սթիքինգ» Չեչնիայի արդարադատության նախաձեռնությունը նույնպես ներկայացնում է չեչեն դիմողների շահերը Դատարանում:

Մարդու իրավունքների քրդական ծրագիրը Եվրոպական դատարանում ներկայացնում է դիմողներին Թուրքիայի, Չայաստանի և Ադրբեջանի դեմ գործերով:

Եվրոպական դատարանի գործերում մի շարք ԶԿ-ներ, ներառյալ նաև «ԷյԱյԱռի» կենտրոնը, Զոդված 19-ը՝ արտահայտվելու ազատության գործերով, «Էմնիսթի ինթրնեշնլը», Արդարադատության վարչարարության կոմիտեն (Չյուսիսային Իռլանդիայի գործերով), Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (գնչուների գործերով) «Ինթեռայթսը» և «Ջասթիսը» հաճախ մասնակցում են երրորդ կողմի կարգավիճակով: «Ինթեռայթսն» ի վիճակի է աջակցություն ցուցաբերել արտահայտվելու ազատությանը վերաբերող գործերում (ամբողջ Եվրոպայով մեկ), ինչպես նաև կենտրոնական և Արևելյան Եվրոպային առնչվող՝ մարդու իրավունքների վերաբերյալ ցանկացած տիպի գործով: «Ջասթիսը» Իրավաբանների միջազգային կոմիտեի (ICJ) բրիտանական մասնաճյուղն է և ունի մարդու իրավունքների հետազոտությունների և քաղաքականության ոլորտում գերազանց փորձագիտական ներուժ: Չնայած նա դիմողներ չի ներկայացնում Եվրոպական դատարան կամ խորհրդատվություն տրամադրում նրանց, «Ջասթիսը», երրորդ կողմի կարգավիճակով, Եվրոպական դատարանի վարույթում մասնակցել է հետևյալ գործերին՝

- *Թ-ն և Վ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (T and V v UK)*³¹ գործը. երեխաների դեմ իրականացված քրեական վարույթի արդարաբարությունը,

²⁶ Թիվ 24760/94, 29.10.98, (1999) 28 EHRR 652:

²⁷ Թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04:

²⁸ Հեղինակը EHRAC-ի տնօրենն է, որը խորհրդատվություն է տրամադրում նաև Արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային Միության այլ երկրներում բնակվող անձանց:

²⁹ Իսայեվան ընդդեմ Ռուսաստանի (Isayeva v Russia) գործը, թիվ 57950/00, որոշում 19.12.02, Իսայեվան ընդդեմ Ռուսաստանի (Isayeva v Russia) գործը, թիվ 57947/00, Ջինա Աբդուլայեվնա Յուսուպովան ընդդեմ Ռուսաստանի (Zina Abdulayevna Yusupova v Russia) գործը, թիվ 57948/00, Լիբկան Բազեյեվան ընդդեմ Ռուսաստանի (Libkan Bazeyeva v Russia) գործը, թիվ 57949/00, որոշում 19.12.02, Մագոմետ Ահմեդովիչ Խաշիյեվն ընդդեմ Ռուսաստանի (Magomet Akhmedovich Khashiyev v Russia) գործը, թիվ 57942/00, Ռոզա Արիբովնա Ակայեվան ընդդեմ Ռուսաստանի (Roza Aribovna Akayeva v Russia) գործը, թիվ 57945/00, որոշում 19.12.02:

³⁰ Թիվ 55723/00 որոշում 16.10.03 (գործի՝ ըստ էության որոշումը հետևելու է 1.7.04-ին նախատեսված բանավոր դատալսմանը):

³¹ Թիվ 24724/94 և թիվ 24888/94, 16.12.99, (2000) 30 EHRR 121:

- *Թեյքսեյրա դը Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի (Teixeira de Castro v Portugal)*³² գործը. ոստիկանների կողմից հրահրված իրավախախտումների գործը:

Հյուսիսային Իռլանդիայի մարդու իրավունքների հանձնաժողովը նույնպես, որպես երրորդ կողմ, հանդես է եկել Եվրոպական դատարանում³³:

Եթե գործը այնպիսի կարևոր քաղաքական հետևանքների հետ է կապված, որոնք, բացի իրենց պաշտպանյալից, ազդեցություն կունենան շատ ավելի մեծ թվով անձանց վրա, փաստաբաններին խորհուրդ է տրվում դիմել հիշյալ ՀԿ-ներից որևէ մեկին՝ քննարկելու, թե արդյոք նրանք շահագրգռված են Դատարանում որպես երրորդ կողմ հանդես գալու մեջ: Այդօրինակ մասնակցության գործընթացին է անդրադառնում բաժին 2.6-ը:

Նշված ՀԿ-ների կոնտակտային տվյալներն են՝

«AIRE» կենտրոն (The AIRE Centre)

Հասցե՝ 17 Red Lion Square
London WC1R 4QH
Հեռախոս՝ ++44(0)20 7831 3850
Ֆաքս՝ ++44(0)20 7404 7760
Էլ-փոստ՝ info@airecentre.org
Կայք՝ www.airecentre.org

«Էմնիսթի ինթերնեշնլ» (Amnesty International)

Հասցե՝ 1 Easton Street
London WC1X 8DJ
Հեռախոս՝ ++44(0)20 7413 5500
Ֆաքս՝ ++44(0)20 7956 1157
Կայք՝ www.amnesty.org.uk

Հոդված 19 (Article 19)

Հասցե՝ Lancaster House
33 Islington High Street
London N1 9LH
Հեռախոս՝ ++44(0)20 7278 9292
Ֆաքս՝ ++44(0)20 7713 1356
Էլ-փոստ՝ info@article19.org
Կայք՝ www.article19.org

Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոն (EHRAC)

Հասցե՝ London Metropolitan University
LH222 Ladbroke House
62-66 Highbury Grove
London N5 2AD
Հեռախոս՝ ++44(0)20 7133 5087
Ֆաքս՝ ++44(0)20 7133 5173
Էլ-փոստ՝ EHRAC@londonmet.ac.uk.org

³² Թիվ 25829/94, 9.6.98, (1999) 28 EHRR 101:

³³ Տե՛ս Շանաղանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK) գործը, թիվ 37715/97, 4.4.00, Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK) գործը, թիվ 30054/96, 4.4.00, Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK) գործը, թիվ 24746/94, 4.4.00, (2003) 37 EHRR 2 և Մքթերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK) գործը, թիվ 28883/95, 4.4.00, (2002) 34 EHRR 20:

Կայք՝ www.londonmet.ac.uk/ehrac

Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոն

Հասցե՝ H-1386 Budapest 62
P.O. Box 906/93
Hungary

Հեռախոս՝ 00 36 1 41 32200

Ֆաքս՝ 00 36 1 41 32201

Էլ-փոստ՝ legalservices@errc.org

Կայք՝ www.errc.org

«Ինթերայթս» (Interights)

Հասցե՝ Lancaster House
33 Islington High Street
London N1 9LH

Հեռախոս՝ ++44(0)20 7278 3230

Ֆաքս՝ ++44(0)20 7278 4334

Կայք՝ www.interights.org

«Ջասթիս» (JUSTICE)

Հասցե՝ 59 Carter Lane
London EC4V 5AQ

Հեռախոս՝ ++44(0)20 7329 5100

Ֆաքս՝ ++44(0)20 7329 5055

Էլ-փոստ՝ admin@justice.org.uk

Կայք՝ www.justice.org.uk

Մարդու իրավունքների քրդական ծրագիր (KHRP)

Հասցե՝ 2 New Burlington Place
London W1S 2HP

Հեռախոս՝ ++44(0)20 7287 2772

Ֆաքս՝ ++44(0)20 7734 4927

Էլ-փոստ՝ khrp@khrp.demon.co.uk

Կայք՝ www.khrp.org

«Լիբերթի»

Հասցե՝ 21 Tabard Street
London SE1 4LA

Հեռախոս՝ ++44(0)20 7403 3888

Ֆաքս՝ ++44(0)20 7407 5354

Էլ-փոստ՝ info@liberty-human-rights.org.uk

Կայք՝ www.liberty-human-rights.org

Մարդու իրավունքների կենտրոն «Մեմորիալ»

Հասցե՝ 103051 Maly Karetniy pereulok 12
Մոսկվա, Ռուսաստան

Հեռախոս՝ 007 095 273 6948, 007 095 200 6506

Ֆաքս՝ 007 095 273 6952
Էլ-փոստ՝ admin@ehrac.memo.ru
Կայք՝ www.memo.ru

«Աթիթչինգ» Չեչնյայի արդարադատության նախաձեռնություն
Հասցե՝ P.O. Box 11, 111555,
Մոսկվա, Ռուսաստան
Հեռախոս/Ֆաքս 007 095 915 0869/0829
Էլ-փոստ՝ Moscow@scji.org
Կայք՝ www.scji.rorg

Հյուսիսային Իռլանդիայի գործերի վերաբերյալ դիմողները կարող են խորհրդատվություն ստանալ Հյուսիսային Իռլանդիայի Մարդու իրավունքների հանձնաժողովից³⁴:

Հյուսիսային Իռլանդիայի Մարդու իրավունքների հանձնաժողով
Հասցե՝ Temple Court
39 North Street
Belfast BT1 1NA
Northern Ireland
Հեռախոս՝ ++44(0)28 9024 3987
Ֆաքս՝ ++44(0)28 9024 7844
Էլ-փոստ՝ info@nihrc.org
Կայք՝ www.nihrc.org

«Արդարադատության վարչարարության կոմիտե» ՀԿ-ն նույնպես կարող է խորհրդատվություն տրամադրել Հյուսիսային Իռլանդիայի՝ Եվրոպական կոնվենցիայի գործերի վերաբերյալ:

Արդարադատության վարչարարության կոմիտե
Հասցե՝ 45/47 Donegal Street
Belfast BT1 2BR
Northern Ireland
Հեռախոս՝ ++44(0)28 9096 1122
Ֆաքս՝ ++44(0)28 9024 6706
Էլ-փոստ՝ info@caj.org.uk
Կայք՝ www.caj.org.uk

Շոտլանդիայում օժանդակության համար անհրաժեշտ է դիմել Մարդու իրավունքների շոտլանդական կենտրոն:

Մարդու իրավունքների շոտլանդական կենտրոն
Հասցե՝ 146 Holland Street
Glasgow G2 4NG
Հեռախոս՝ ++44(0)141 332 5960
Ֆաքս՝ ++44(0)141 332 5309
Էլ-փոստ՝ info@scottishhumanrightscentre.org.uk
Կայք՝ www.scottishhumanrightscentre.org.uk

³⁴ Համաձայն Հյուսիսային Իռլանդիայի 1998 թվականի ապրիլի կետ 69-ի՝ Հանձնաժողովն իրավասու է աջակցություն տրամադրել այն անձանց, ովքեր դիմում են՝ կապված մարդու իրավունքների պաշտպանության նյութական կամ դատավարական իրավունքի խնդիրներով:

2.4 ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ

Նախնական մամակը ստանալուն պես Դատարանը գրանցում է գանգատը և գործին տալիս է համար:

Դատարանի քարտուղարության իրավաբաններից մեկը դիմողի ներկայացուցչին կամ դիմողին, եթե նա ներկայացուցիչ չունի, ուղարկում է գանգատի և լիազորագրի ձևաթղթերը (տե՛ս Դատարանի՝ մամակը ստանալու մասին հաստատման ծանուցման ձևը հավելված 6–ում):

2.4.1 Ժամկետները

Գանգատի ձևաթուղթը և լիազորագիրը պետք է լրացնել և ուղարկել Դատարան՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում, որը, որպես կանոն, վեց շաբաթ է: Ի տարբերություն գանգատը ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետին՝ այս ժամկետը, ինչպես նաև Դատարանի կողմից սահմանված հաջորդ բոլոր ժամկետները, հնարավոր է երկարաձգել: Դիմումը պետք է ներկայացնել գրավոր՝ նշելով լրացուցիչ ժամանակ խնդրելու պատճառները: Ժամկետի երկարաձգման առաջին դիմումի առնչությամբ Դատարանը սովորաբար հատուկ հիմքեր չի պահանջում: Ժամկետի երկարաձգման մասին առաջին դիմումը, որպես կանոն, բավարարվում է մի քանի պատճառներով՝ այդ թվում տեղեկություններ ձեռք բերելու հետ կապված դժվարությունները, հետագայում հետազոտություններ կատարելու կամ լրացուցիչ փաստաթղթեր ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, ժամկետը լրանալուց հետո ներկայացված ցանկացած գրավոր փաստարկ չի ընդգրկվի գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ պալատի նախագահն այլ բան է որոշում (Կանոն 38)³⁵: Հետևաբար, ժամկետները պետք է պահպանել, իսկ դրանք երկարաձգելու մասին դիմումները՝ ներկայացնել ճիշտ ժամանակին³⁶: Եթե փաստաբանը չի կարողանում պահպանել ժամկետները կամ եթե վերջին պահին դրանց շտապ հետաձգման կարիք է առաջանում, ապա խորհուրդ է տրվում զանգահարել Դատարան և զրուցել քարտուղարության իրավաբանի հետ:

2.4.2 Լիազորագիրը

Դատարանի լիազորագրի ձևը (Լիազորության ձևը) կցված է հավելված 5-ում: Պաշտպանյալը պետք է ստորագրի լիազորագրի ձևը (պետք է նշել նաև ամսաթիվը)՝ հաստատելու, որ դրանում նշված փաստաբանը լիազորված է՝ հանդես գալու իր անունից (կանոն 45 (3)): Այն պետք է ստորագրի նաև փաստաբանը՝ հաստատելու, որ իրեն հանձնարարվել է ներկայացնել դիմողին:

Եթե վարույթի որևէ փուլում տեղի է ունենում ներկայացուցչի փոփոխություն, Դատարանը պահանջում է, որպեսզի նոր ներկայացուցիչը ներկայացնի նոր լիազորագիր:

2.4.3 Դատարանի քարտուղարությունը

Դատարանի քարտուղարությունը բաղկացած է Դատարանի քարտուղարից, քարտուղարի տեղակալներից, բաժանմունքի քարտուղարի տեղակալներից (հոդված 25 և կանոններ 15-18): Քարտուղարությունը համալրված է իրավաբաններով, որոնք վարում են գործերը, կազմում գործին առնչվող մամակագրությունը, մշակում Դատարանի որոշումների նախագծերը և ներկայացնում դրանք զեկուցող դատավորին: Դատարանի քարտուղարության իրավաբաններից շատերը խորությամբ տիրապետում են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Չնայած

³⁵ Ցանկացած փաստաթուղթ, որի «ուղարկման հաստատված ամսաթիվը» համընկնում է ժամկետի ավարտման օրվա հետ կամ նախորդում դրան, դիտվում է ներկայացված ուղարկված ժամկետի սահմաններում: Եթե նման հաստատված ամսաթիվը բացակայում է, ապա համապատասխան օր է համարվում Դատարանի քարտուղարության կողմից դրա փաստացի ստացման ամսաթիվն է (Կանոն 38 (2)):

³⁶ Տե՛ս Պրակտիկայի մասին ուղեցույցը. Գրավոր միջնորդություններ, կետեր 16-19 (հավելված 3):

դիմողների և նրանց ներկայացուցիչների հետ վարվող նամակագրության մեծ մասը կատարվում է բաժանմունքի քարտուղարների անունից, փաստաբանները կարող են պարզել, թե ո՞ր իրավաբանն է զբաղվել իրենց գործով՝ Դատարանի նամակի վրա նշված անվան սկզբնատառերից կամ պարզապես զանգահարելով Դատարան: Չնայած Դատարանի գործերի ծավալներով պայմանավորված քարտուղարության իրավաբանների գերծանրաբեռնվածությանը, նրանք տեղեկություններ են տրամադրում գործի ընթացքի, ինչպես նաև Դատարանի ընթացակարգային հարցերի վերաբերյալ: Գործնականում, նրանք շատ ավելի պատրաստակամ են, քան ներպետական ատյանների աշխատակազմը: Եթե փաստաբանները կոնկրետ հարցեր ունեն իրենց գործերի կամ ընդհանրապես Դատարանի ընթացակարգի վերաբերյալ, ամենապարզ և արագ լուծումը Դատարանի քարտուղարության համապատասխան իրավաբանի հետ կապվելն է:

2.4.4 Գանգատի ձևաթուղթը լրացնելը

Դատարանի գանգատի ձևաթուղթը ներկայացված է հավելված 4-ում: Դիմողներին խորհուրդ է տրվում օգտվել դրանից (կանոն 47(1)), եթե համապատասխան բաժանմունքի նախագահին այլ բան չի որոշում: Այն պետք է ներկայացնել տպագիր, չնայած Դատարանն ընդունում է նաև ձեռագիր գանգատներ, եթե, իհարկե, դրանք ընթեռնելի են³⁷: Յուրաքանչյուր գանգատի ձևաթուղթ պետք է ներառի հետևյալը (Կանոն 47(1)-ի համաձայն)՝

ա/ դիմողի անունը, ծննդյան անսաթիվը, ազգությունը, սեռը, զբաղմունքը և հասցեն,

բ/ ներկայացուցչի, եթե կա այդպիսին, անունը, զբաղմունքը և հասցեն,

գ/ պատասխանող կառավարությունը, որի դեմ է ուղղված գանգատը,

դ/ փաստերի համառոտ շարադրանքը,

ե/ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների համառոտ շարադրանքը և համապատասխան փաստարկները,

զ/ ընդունելիության չափանիշների համապատասխանության վերաբերյալ դիմողի համառոտ հայտարարություն (ներպետական իրավական միջոցները սպառելը և վեցամսյա ժամկետի կանոնը) այնպես, ինչպես սահմանված է Կոնվենցիայի հոդված 35 (1)-ով,

է/ գանգատի նպատակը, ինչպես նաև արդարացի փոխհատուցման պահանջի ընդհանուր նկարագրությունը, որ դիմողը մտադիր է ներկայացնել հոդված 41-ի պահանջներին համապատասխան:

Եթե գանգատի ծավալը գերազանցում է տասը էջը, ապա Դատարանը պահանջում է, որ ներկայացվի նաև դրա համառոտագիրը³⁸: Դիմողները գանգատի ձևաթղթի մեջ պետք է նշեն, թե արդյոք իրենց բողոքները ներկայացրել են միջազգային որևէ այլ ատյանի քննությանը կամ կարգավորմանը (Կանոն 47 (2)(բ)): Սա կարող է ներառել բողոքներ, օրինակ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով՝ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի շրջանակներում: Այս դրույթն ավելի մանրամասն քննարկված է գլուխ 5-ում:

Խիստ կարևոր է, որպեսզի դիմողները Դատարան ներկայացնեն բոլոր համապատասխան փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ գանգատի նպատակին վերաբերող բոլոր որոշումները (դատական կամ այլ), ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս, որ ընդունելիության չափանիշները բավարարված են (կանոն 47(1)(ը) և (2)(ա)): Բողոքարկման հիմքերը նույնպես կարող են կարևոր լինել՝ ցույց տալու, որ Դատարանում բարձրացված հարցերը հնարավորինս լիարժեք քննարկվել են ներպետական ատյաններում:

Գանգատի ձևաթուղթն ունի բաժիններ, որոնք համապատասխանում են վերոհիշյալ (ա)-ից (ե) կետերին: Փաստաբաններին, ամենայն հավանականությամբ, չի բավարարի գանգատի ձևաթղթի ծավալը. այս դեպքում ներկայացվող նյութերը Դատարանն կընդունի որպես գանգատի հավելված: Գործնականում, (ա)-ից (զ) կետերով պահանջվող տեղեկությունները կարելի է լրացնել գանգատի ձևաթղթի առաջին էջում, իսկ մնացած բովանդակային բաժինները կարելի է ներառել հավելվածներում և ձևաթղթում հղումներ կատարել դրանց: Լրացված գանգատի ձևաթուղթը,

³⁷ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 13 (հավելված 3):

³⁸ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 14 (հավելված 3):

(հավելվածի հետ մեկտեղ) կարելի է գտնել հավելված 22-ում (*Պեկն ընդդեմ Միացյալ Թագավորության (Peck v UK)* գործը):

Գանգատի քննարկման նախնական փուլում հոդված 41-ով նախատեսված փոխհատուցման մանրամասն պահանջ ներկայացնելու կարիք չկա: Սրա անհրաժեշտությունը առաջանում է միայն ընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո: Նախնական գանգատում սովորաբար³⁹ ներառվում է հոդված 41-ով նախատեսված երեք հարց՝

1. Կոնվենցիայի համապատասխան հոդվածների խախտումները ճանաչելու պահանջ,
2. փոխհատուցման պահանջ (նյութական և/կամ ոչ նյութական վնասի),
3. իրավաբանական ծախսերի և ծախքերի փոխհատուցման պահանջ (ներառյալ, ներպետական վարույթների ընթացքում կատարված դատական ծախսերը, եթե այդպիսիք առկա են):

Չնայած նախնական գանգատում չի պահանջվում ներառել մանրամասն պահանջներ, խելամիտ կլինի պահանջվող բոլոր տեղեկություններն ու ապացույցները ձեռք բերել գործի սկզբնական փուլում, քանի որ գործերը Եվրոպական դատարանի համակարգով անցնում են մի քանի տարում և վերջում արդեն շատ ավելի դժվար է ձեռք բերել հոդված 41-ի համաձայն պահանջ ներկայացնելու համար անհարժեշտ ապացույցները (տե՛ս գլուխ 9):

Դիմողներից պահանջվում է Դատարանին տեղյակ պահել հասցեի և գանգատին առնչվող որևէ այլ հանգամանքների փոփոխության մասին (կանոն 47(6)): Դատարանը գրավոր հայտարարությունների վերաբերյալ այժմ ընդունել է Պրակտիկայի մասին ուղեցույց (տե՛ս ստորև բաժին 2.5.6-ը և հավելված 3-ը):

2.4.5 Ռազմավարություն

Փաստաբաններին խորհուրդ է տրվում սկզբից ևեթ Դատարան ներկայացնել հնարավորինս հիմնավորված գանգատ և չապավինել դիմողի գործը յուրաքանչյուր փուլում՝ ի պատասխան կառավարության փաստարկների ուժեղացնելուն: Իհարկե, հնարավոր է նաև զարգացնել դիմողի գործն ընթացքում՝ ի պատասխան կառավարության ներկայացրած փաստարկների, սակայն խիստ կարևոր է հիշել, որ Դատարանը կարող է հենց սկզբնական փուլում անընդունելի ճանաչել գործը, և այն, արդյունքում, կարող է չհասնել կառավարությանը: Համաձայն Դատարանի՝ ընդունելիության պայմանների՝ գործերը կարող են անընդունելի ճանաչվել «ակնհայտորեն անհիմն լինելու» հիմքով: Այս պայմանն, իրականում, համարժեք է գործի՝ ըստ էության նախնական քննությանը (տե՛ս գլուխ 5-ը ընդունելիության կանոնների վերաբերյալ): Դատարան ներկայացված գանգատները հաճախ ճանաչվում են անընդունելի ակնհայտորեն անհիմն լինելու համար. հետևաբար, որքան ավելի համոզիչ է նախնական գանգատը, այնքան քիչ է այդ դժվարին արգելքը չհաղթահարելու հավանականությունը:

Լրջորեն պետք է քննության առնել նաև դիմողի գործով վիճարկվող հանգամանքների շրջանակը: Կոնվենցիայի մի շարք դրույթներ կարող են վիճարկվել ցանկացած գործով: Օրինակ քրեական գործով, փաստաբանը զուցե ցանկանա վիճարկել հոդված 5-ի (անձի ազատություն և անձեռնմխելիություն) բոլոր կետերը և հոդված 6-ը (արդար դատաքննություն), սակայն, թերևս հարկ լինի անդրադառնալ հոդված 7-ին (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա), հոդված 13-ին (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ), հոդված 14-ին (խտրականության արգելում) և նույնիսկ 8-ից 11-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքներին քրեական վարույթի շրջանակներում միջամտությանը: Պետք է հաշվի առնել նաև Արձանագրություն թիվ 7-ով ամրագրված մի շարք դրույթներ՝ հոդված 2-ը (գանգատարկման իրավունք), հոդված 3-ը (փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում), հոդված 4-ը (կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունք): Եթե առկա են տարբեր փաստարկներ, որոնք կարելի է ներկայացնել, ապա փաստաբանները պետք է մտածեն, թե ի՞նչ չափով պետք է կենտրոնանան հիմնական փաստարկների վրա և ի՞նչ չափով՝ լրացուցիչների: Իհարկե, եթե Կոնվենցիայի որևէ հոդվածի

³⁹ Բացառիկ դեպքերում դիմողը հնարավորություն ունի հոդված 41-ի սահմաններում այլ փոխհատուցում պահանջել (օրինակ՝ սեփականության վերականգնում): Այս խնդրին առավել հանգամանալից են անդրադառնում 4.5, 9.3, 9.4 բաժինները:

Ենթադրյալ խախտումն ընդհանրապես չի վիճարկվել նախնական գանգատում, ապա այն կճանաչվի անընդունելի վեցամսյա ժամկետի կանոնը չպահպանելու պատճառով: Փաստաբաններին, հետևաբար, խորհուրդ է տրվում նախնական գանգատում ներառել բոլոր վիճարկելի փաստարկները: Շատ հնարավոր է, որ գործի ընթացքում և կառավարության առարկությունների լույսի ներքո, լրացուցիչ փաստարկներն ավելի թուլանան կամ ուժեղանան: Այն պահից, երբ կառավարությունը նույնպես բացում է իր խաղաքարտերը, դիմողի ներկայացուցիչը կարող է որոշել, թե ո՞ր թույլ փաստարկները պետք է անտեսել. դրա համար դիմողին ոչ մի տույժ չի սպասվում:

2.4.6 Գանգատը հիմնավորող փաստաթղթերը

Գործին առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենները (այլ ոչ թե բնօրինակները)⁴⁰ պետք է ներկայացվեն Դատարան գանգատի ձևաթղթի հետ մասին, ցանկալի է ինդեքսավորված թղթապանակով: Դրանք նաև պետք է թվարկված լինեն ժամանակագրական կարգով⁴¹, սակայն պարտադիր չէ, որ հիմնավորող փաստաթղթերը լինեն էջադրված: Դրանք կարող են ներառել ներպետական դատական ատյաններին ներկայացրած պահանջները, վկաների ցուցմունքները, վճիռները, գործին առնչվող նամակագրությունը, հաշվետվությունները, ինչպես նաև այլ ոչ դատական որոշումներ, ներառյալ ցանկացած փաստաթուղթ, որը կհիմնավորի ընդունելիության չափանիշներին գանգատի համապատասխանությունը (մասնավորապես՝ ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառումը և վեցամսյա ժամկետի կանոնի պահպանումը)⁴²: Խորհուրդ է տրվում ներառել ներպետական դատարանների այն վճիռների պատճենները, որոնց վրա հիմնվում է դիմողը, սակայն հարկ չկա ներկայացնելու Եվրոպական դատարանի վճիռները:

Եթե համապատասխան փաստաթղթերը չեն ներկայացվում, Դատարանը պահանջում է ներկայացնել դրանք:

2.4.7 Գաղտնիությունը

Դատարանի գործունեությունը հիմնված է այն ընդհանուր սկզբունքի վրա, որի համաձայն Դատարանի վարույթում գտնվող գործի մասին տեղեկությունները հրապարակային են: Հրապարակային են ոչ միայն Դատարանի վճիռներն ու ընդունելիության մասին որոշումները, այլև բոլոր այն փաստաթղթերը, որոնք ներկայացվել են Քարտուղարություն (տես ստորև կետ 2.4.13-ը): Դատարանն ամսեկան պարբերականությամբ հրատարակում է տեղեկատուներ, որոնք ներառում են այն գործերի հակիրճ նկարագրերը, որոնք գտնվում են պատասխանող կառավարությանը ծանուցման փուլում: Հետևաբար, դիմողի ինքնությունը կարող է հրապարակավ հայտնի դառնալ գործի՝ կառավարությանը ծանուցելու փուլում (նույնիսկ ավելի վաղ, եթե Դատարանը մամուլի հաղորդագրություն հրապարակի):

Այնուամենայնիվ, Դատարանի համապատասխան պալատի նախագահը կարող է թույլատրել դիմողին ներկայացնելու անանուն գանգատ «բացառիկ և պատշաճ կերպով հիմնավորված» դեպքերում (կանոն 47(3)): Այն դիմողները, ովքեր չեն ցանկանում, որպեսզի իրենց ինքնությունը բացահայտվի դատավարության ընթացքում, պետք է Դատարանին ներկայացնեն իրենց անունը չհրապարակելու ցանկության հիմնավոր պատճառներ: Եթե գաղտնիության մասին խնդրանքը բավարարվում է, ապա դիմողի անձին հղում են կատարում ըստ նրա անվան սկզբնատառերի կամ «անանուն սկզբնատառերի», ինչպես, օրինակ, X կամ Y⁴³:

2.4.8 Իրավական օգնություն

⁴⁰ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 15 (հավելված 3):

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

⁴² Կանոն (47)(2)(ա):

⁴³ Պրակտիկայի մասին ուղեցույց. Վարույթի հարուցում, կետ 17 (հավելված 3):

Այս փուլում իրավաբանական օգնություն չի տրամադրվում, սակայն հետագայում տրամադրվելու դեպքում, հնարավոր է գանգատի նախապատրաստման համար հաստատագրված գումարի չափով փոխհատուցում ստանալ (տե՛ս ստորև իրավաբանական օգնությանը նվիրված բաժին 2.5.5-ը):

2.4.9 Գործի գրանցումը

Նախնական նամակը կամ լրացված գանգատի ձևաթուղթը ստանալուն պես Դատարանը գրավոր պատասխանում է՝ հաստատելով, որ գործը գրանցվել է, հաղորդե՛նք գործի համարը և գանգատի ներկայացման ամսաթիվը: Սովորաբար հենց նամակի կամ գանգատի ամսաթիվն է (այլ ոչ թե՛ ստացման), որ կանգնեցնում է վեցամսյա ժամկետի ընթացքը: Անհրաժեշտ է ստուգել, որ ամսաթիվը ճիշտ նշված լինի, քանի որ Դատարանի քարտուղարությունը երբեմն կարող է սխալներ թույլ տալ: Դատարանի հայեցողությանն է թողնված ներկայացման ժամկետի վերանայումը, եթե երևան են գալիս նոր հանգամանքներ (տես կանոն 47 (5)), սակայն գործնականում նման բան հազվադեպ է տեղի ունենում: Գործի համարն անհրաժեշտ է նշել Դատարանի հետ վարվող՝ ողջ հետագա նամակագրության ընթացքում:

2.4.10 Անհետաձգելի գործեր. Գանգատի ապահովման միջոցներ

Եվրոպական կոնվենցիայի համակարգում Դատարանի կողմից պարտադիր հանձնարարականների տրման ընթացակարգ, որպես այդպիսին գոյություն չունի: Այնուամենայնիվ, անհետաձգելի գործերի դեպքում, երբ վտանգված է դիմողի կյանքը կամ առկա է նրա նկատմամբ վատ վերաբերմունքի ծանր դրսևորման վտանգ, Դատարանը, կանոն 39-ի (նախկին կանոն 36) համաձայն, կարող է «Գանգատի ապահովման միջոցներ» կիրառել⁴⁴: Դատարանի պալատներից որևէ մեկը կամ դրա նախագահը կարող են կողմերից յուրաքանչյուրի համար սահմանել գանգատի ապահովման ցանկացած միջոց, որը իրենց կարծիքով պետք է կիրառել՝ ի շահ կողմերի կամ վարույթի պատշաճ իրականացման: Դատարանը կարող է նաև կողմերից տեղեկություններ պահանջել՝ իր կողմից սահմանած ցանկացած գանգատի ապահովման միջոցի կատարման հետ կապված հարցի վերաբերյալ (կանոն 39 (3)): Գանգատի ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմումը կարող է ներկայացնել կողմը (անհատական գանգատ ներկայացրած դիմողը կամ Դատարան գանգատ ներկայացրած պետությունը) կամ «գործին առնչություն ունեցող ցանկացած անձ», ինչպես, օրինակ, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը⁴⁵ (տես բաժին 1.1.1-ը վերևում) կամ Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը (տես բաժին 1.1.2-ը վերևում): Դատարանը գանգատի ապահովման միջոցների կիրառում կարող է պահանջել նաև սեփական նախաձեռնությամբ⁴⁶ (կանոն 39(1)): Չնայած, գանգատի ապահովման միջոցները, որպես կանոն, ուղղված են պատասխանող կառավարության դեմ, Դատարանը կանոն 39-ի հիման վրա կարող է դրանք կիրառել նաև դիմողի նկատմամբ, ինչպես, օրինակ, *Իլյասկուն և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Մոլդովայի (Ilaşcu and others v Russia and Moldova)*⁴⁷, հորդորելու դիմողին՝ պրն. Իվանտոբին, դադարեցնելու հացադուլը:

⁴⁴ Տե՛ս, Գ. Գարրի, «Երբ վարույթը կյանքի ու մահու հարց է. գանգատի ապահովման միջոցները և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան», [2001] EPL 417: Գ. Լետսաս «Միջազգային մարդու իրավունքները և գանգատի ապահովման միջոցների կիրառման պարտադիր ուժը», [2003] EHRLR 527: Յ. Դեյկ և Յ.Բուրբանո Զերրերա, «Գանգատի ապահովման միջոցների կիրառումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում» (2003) 21/4 *Netherlands Quarterly of Human Rights /Մարդու իրավունքների միջազգային պարբերական*:

⁴⁵ Տե՛ս, օրինակ, Դանիան, Նորվեգիան, Շվեդիան և Նիդեռլանդներն ընդդեմ Գերմանիայի (Denmark, Norway, Sweden and the Netherlands v Greece) գործը, թիվ 3321/67, թիվ 3322/67, թիվ 3323/67 և թիվ 3344/67, 5.11.69, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեգիր, հատոր 13, 1969:

⁴⁶ Տե՛ս, օրինակ, Դանիան, Նորվեգիան և Շվեդիան ընդդեմ Գերմանիայի (Denmark, Norway and Sweden v Greece) գործը, թիվ 4448/67, որոշում 26.5.70, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեգիր, հատոր 13, 1970:

⁴⁷ Թիվ 48787/99, 8.7.04 կետ 11:

Գանգատի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ դիմումները քննելիս Դատարանը կիրառում է երեք չափանիշ՝

- պետք է առկա լինի շատ լուրջ բնույթի չվերականգնվող վնասի սպառնալիք,
- վնասի սպառնալիքը պետք է լինի անմիջական, իսկ վնասը՝ չփոխհատուցվող, և
- պետք է առկա լինի *prima facie* վիճարկելի գործ:

Գանգատի ապահովման միջոցները հետևաբար կիրառվում են, երբ դիմողը կանգնած է եղել այնպիսի պետություն վտարվելու սպառնալիքի առջև, որտեղ առկա է նրա նկատմամբ խոշտանգումների կամ մահվան վտանգ: Օրինակ՝ դիմողները գանգատի ապահովման միջոցների կիրառում են պահանջել *Սյորինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Soering v UK)*⁴⁸ և *Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (D v UK)*⁴⁹ գործերում (երկու գործերին էլ անդրադառնում է բաժին 2.4.11-ը): Երկու գործերում էլ, միմյանցից տարբերվող հիմքերով, գանգատի ապահովման միջոցները կիրառվել են՝ կանխելու դիմողների վտարումն այնպիսի հանգամանքներում, երբ նրանց կյանքը վտանգված էր ընդունող պետությունում: Սյորինգի գործում դիմողը կանգնած էր Միացյալ Նահանգներ հանձնման և սպանության մեղադրանքով մահապատժի վտանգի առջև, իսկ Դ-ի գործում դիմողը, որը ՉԻԱՅ հիվանդության ծանր փուլում էր գտնվում, կանգնած էր իր հայրենի երկիր՝ Սուրբ Քիթս վտարվելու սպառնալիքի առջև, որտեղ, ըստ նրա փաստարկների, այդպիսի հիվանդների համար բուժումը բոլորովին անհամապատասխան էր: Դատարանը կանոն 39-ը կիրառել է նաև, օրինակ, *Հիլալն ընդդեմ Միացյալ Թագավորության (Hilal v UK)*⁵⁰ գործում՝ կանխելու դիմողի վտարումը Տանզանիա, *Քալանթարին ընդդեմ Գերմանիայի (Kalantari v Germany)*⁵¹ և *Ամրոլլահին ընդդեմ Դանիայի (Amrollahi v Denmark)*⁵² գործերում՝ երկու դեպքում էլ կանխելու դիմողների վտարումը Իրան, ինչպես նաև *Շամայևը և այլոք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի (Samayev and others v Georgia and Russia)*⁵³ գործում՝ կանխելու 11 չեչենների հանձնումը Վրաստանից Ռուսաստան: *Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության (Chahal v UK)*⁵⁴ գործի ընթացքում, որը վերաբերում էր ազգային անվտանգության նկատառումներով ենթադրյալ սիբխ գրոհայինի առաջարկվող արտաքսմանը, Եվրոպական հանձնաժողովը կիրառեց գանգատի ապահովման միջոցների ընթացակարգը՝ խնդրելով կառավարությանը չիրականացնել արտաքսումը: Երբ գործն արդեն Դատարանի վարույթում էր գտնվում, կառավարությունը պարտավորվեց առնվազն երկու շաբաթ առաջ Դատարանին ծանուցել նախատեսվող արտաքսման վերաբերյալ:

Այդուհանդերձ, դիմողներին Եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող ցանկացած այլ պետություն տեղափոխելու վերաբերյալ գանգատի ապահովման միջոցների կիրառման պահանջը սովորաբար չի բավարարվում. այն հիմքով, որ տվյալ պետությունը պետք է կատարի Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները, եթե չկան հակառակն ապացուցող հստակ ապացույցներ⁵⁵:

Կանոն 39-ի համաձայն՝ կիրառվելիք հնարավոր «միջոցառումների» մասշտաբների մասին պատկերացում կարելի է կազմել *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v Turkey)*⁵⁶ գործից, որն վերաբերվում է Քրդական բանվորական կուսակցության (PKK) առաջնորդին: Այստեղ Դատարանը կառավարությունից պահանջեց ապահովել հոդված 6-ի կիրառումը Ազգային անվտանգության

⁴⁸ Թիվ 14038/88 Շարք Ա, թիվ 161, 7.7.89, (1989) 11 EHRR 439:

⁴⁹ Թիվ 30240/96, 2.5.97, (1997) 24 EHRR 423, տե՛ս նաև Բենսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Bensaid v UK) գործը, թիվ 44599/98, 6.2.01 (2001) 33 EHRR 10 կետ 4:

⁵⁰ Թիվ 45276/99, 6.3.01, (2001) 33 EHRR 2, կետ 5:

⁵¹ Թիվ 51342/99, 11.10.01:

⁵² Թիվ 56811/00, 11.7.02, կետ 5:

⁵³ Թիվ 36378/02 (ՄԻԵԴ-ի մամուլի հաղորդագրություն 10.10.02): Միջոցառումները հետագայում դադարեցվեցին այն բանից հետո, երբ Ռուսաստանի կառավարությունը երաշխավորեց, որ դիմողներն անարգել կօգտվեն բուժօգնությունից, իրավաբանական խորհրդատվությունից և կկարողանան դիմել Դատարան, որ դիմողները չեն ենթարկվի մահապատժի և որ նրանց առողջությունն ու անվտանգությունը կապահովվի (ՄԻԵԴ-ի մամուլի հաղորդագրություն 26.11.02):

⁵⁴ Թիվ 22414/93, 15.11.96, (1997) 23 EHRR 413:

⁵⁵ Տե՛ս, օրինակ, *Ա. Գ-ն ընդդեմ Շվեդիայի (A.G. v Sweden)* գործը 27776/95, որոշում 26.10.95 (քրդերի՝ նախատեսվող վտարում թուրքիա):

⁵⁶ Թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10:

դատարանում դիմողի դեմ հարուցված քրեական վարույթի առնչությամբ, ինչպես նաև ապահովել, որ դիմողը կարողանա արդյունավետորեն իրականացնել եվրոպական դատարան դիմելու՝ իր իրավունքը իր ազատ կամքով ընտրված փաստաբանների միջոցով: Հետագայում Դատարանը պահանջեց թուրքական կառավարությունից, համաձայն կանոն 39-ի, դիմողի դատաքննության հետ կապված որոշ հարցեր հստակեցնել (կառավարությունը մերժեց պատասխանել՝ հիմնավորելով, որ այդօրինակ հարցերը դուրս են կանոնի շրջանակներից): Դատարանն այնուհետև պահանջեց, որպեսզի կառավարությունը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու որ մահապատիժն ի կատար չածվի (որը նշանակվել էր Թուրքիայի Ազգային անվտանգության պետական դատարանի կողմից)⁵⁷: Բացառիկ հանգամանքներում Դատարանը կարող է նաև գանգատի ապահովման միջոցների կիրառում պահանջել՝ պաշտպանելու կալանքի տակ գտնվող խոցելի անձանց առողջությունը⁵⁸:

Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին դիմում հազվադեպ է ներկայացվում, և էլ ավելի հազվադեպ՝ բավարարվում: 1989 թվականի դրությամբ ներկայացվել է գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին 182 դիմում՝ հիմնականում արտաքսման գործերի վերաբերյալ, որոնցից բավարարվել են ընդամենը 31-ը⁵⁹: 1974-ից 2002 թվականներն ընկած ժամանակահատվածում ներկայացվել է ընդամենը գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին 2,219 դիմում, որոնցից միայն 321-ն են բավարարվել (14.5%): 2001 թվականին ներկայացվել է գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին 108 դիմում և բավարարվել՝ 12-ը⁶⁰:

Դատարանն այժմ Պրակտիկայի մասին ուղեցույց է հրատարակել *Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին դիմումների վերաբերյալ*⁶¹: Գանգատի ապահովման միջոցների կիրառման համար դիմող անձը դիմումը հրատապ դեպքերում պետք է ուղարկի իր ֆաքսով, էլեկտրոնայի փոստով կամ սուրհանդակի միջոցով⁶²: Պրակտիկայի մասին ուղեցույցը սահմանում է, որ ուշացումներից խուսափելու համար դիմումները չպետք է փոստով ուղարկվեն (սակայն եթե դիմումն ուղարկվում է էլեկտրոնային փոստով, պետք է զուգահեռաբար փոստով ուղարկել դրա պատճեն): Դիմումը պետք է վերնագրված լինի «Կանոն 39՝ անհետաձգելի» և պետք է կազմված լինի Կոնվենցիայի անդամ պետությունների պաշտոնական լեզուներից որևէ մեկով (չնայած, որ սա պարտադիր պահանջ չէ): Ձևաչափի պահանջ, որպես այդպիսին, չկա, սակայն, եթե դիմումն առաջին հաղորդակցությունն է Դատարանի հետ, առաջարկվում է, եթե հնարավոր է, այն ուղարկել լրացված գանգատի ձևաթղթի հետ մեկտեղ (որը պետք է ներառի բացատրություն այն մասին, թե ինչպես են իրավաբանական պաշտպանության ներպետական միջոցները (որոնք կվերացնեին կամ կկասեցնեին խնդրո առարկա գործողությունները) սպառվել): Պրակտիկայի մասին ուղեցույցը առաջարկում է տալիս դիմումները ներկայացնել ժամանակին, ներպետական ատյանների վերջին որոշումից անմիջապես հետո՝ հնարավորինս արագ: Հանձնման կամ արտաքսման գործերում, որտեղ գործողությունները անմիջապես հետևում են վերջնական որոշմանը, Պրակտիկայի մասին ուղեցույցը սահմանում է, որ Դատարանի հետ նպատակահարմար է կապվել նախքան վերջնական որոշման ընդունումը⁶³: Գործնականում փաստաբանի համար կարող է օգտակար լինել նաև առաջին իսկ հնարավորության դեպքում Դատարանի քարտուղարության իրավաբանի հետ հեռախոսով կապվելը՝ նրան զգուշացնելու, որ գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին դիմում է ներկայացվելու: Այս պարագայում Դատարանին պետք է տեղյակ պահել դիմողի

⁵⁷ Մամուլի հաղորդագրություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 30.11.99 *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v Turkey)* գործը թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10:

⁵⁸ Տե՛ս, օրինակ, *Պատանեն ընդդեմ Իտալիայի (Patane v Italy)* գործը, թիվ 11488/85, որոշում 3.12.86: *Իլիչկովն ընդդեմ Բուլղարիայի (Ilijkov v Bulgaria)* գործը, թիվ 33977/96, որոշում 20.10.97:

⁵⁹ *Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas v Sweden)* գործը, թիվ 15576/89, 20.3.91, (1992) 14 EHRR 1, կետ 55:

⁶⁰ Լրացուցիչ վիճակագրական վերլուծության համար տե՛ս Հանելի ու Բուրբանո Հերերայի 44-րդ ծանոթագրությունը, էջեր 663-70:

⁶¹ Հրատարակված է 2003 թ մարտի 5-ին (տես հավելված 3-ում):

⁶² Պրակտիկայի մասին ուղեցույց. Գանգատի ապահովման միջոցների մասին դիմում, բաժին I (հավելված 3):

⁶³ Պրակտիկայի մասին ուղեցույց. Գանգատի ապահովման միջոցների մասին դիմում, բաժին II (հավելված 3)

հանձնման կամ արտաքսման սպասվող օրվա և ժամի մասին, դիմողի հասցեն կամ բնակության վայրը, ինչպես նաև ներպետական գործի համարը⁶⁴:

Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին դիմումը Դատարան ներկայացնելու հետ մեկտեղ դիմողի ներկայացուցչին նաև խորհուրդ է տրվում կառավարության ներկայացուցչին տեղյակ պահել նման դիմումի ներկայացման մասին⁶⁵: Սա կօգնի ապահովելու, որ պատասխանող պետությունը պատրաստ լինի արագ արձագանքելու, եթե Դատարանը բավարարի գանգատի ապահովման միջոցները կիրառելու մասին դիմումը:

Խիստ կարևոր է, որպեսզի դիմողի ներկայացուցիչը ներկայացնի բոլոր հիմնավորող փաստաթղթերը՝ ներառյալ ներպետական դատական ակտերը, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք հարկավոր են դիմողի կյանքին սպառնացող կամ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի ցուցաբերման վտանգի աստիճանը հաստատելու համար: Սրանք կարող են ներառել ինչպես համապատասխան պետությունում առկա իրադրության մասին ընդհանուր բնույթի փաստաթղթեր, ինչպես օրինակ, ՄԱԿ-ի Ձեկուցողների, «Էմնիսթի ինթերնեշնլի» (Amnesty International), Մարդու իրավունքների պաշտպանի (Human Rights Watch) և այլ ՀԿ-ների զեկույցները. սակայն առավել կարևոր է, որպեսզի դիմողի կոնկրետ հարցի առնչությամբ առկա ռիսկերը հաստատող պատշաճ ապացույցներ լինեն: Եթե դիմումը բավարարվում է, Դատարանն անմիջապես տեղյակ է պահում կառավարությանը: Գործը հաճախ հաղորդվում է պատասխանող կառավարությանը գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին դիմումի վերաբերյալ ծանուցման հետ մեկտեղ: Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին ծանուցումը նաև ուղարկվում է Նախարարների կոմիտե (կանոն 39 (2)): Դիմողի ներկայացուցչին խորհուրդ է տրվում քայլեր ձեռնարկել՝ ուղղակիորեն տեղեկացնելու համապատասխան *ազգային* ատյանին գանգատի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ Դատարանի որոշման մասին:

Երբ Դատարանը նշում է գանգատի ապահովման այն միջոցները, որոնք ըստ Դատարանի, անհրաժեշտ է կիրառել, Կառավարությունները համարյա միշտ դրանք կատարում են: *Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas v Sweden)*⁶⁶ գործով Դատարանը նշել է, որ գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին որոշմամբ սահմանված պահանջները համարյա բոլորն էլ ի կատար են ածվել:

Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին պահանջի կատարման հարցը Դատարանը քննության է առել *Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas v Sweden)*⁶⁷ գործում, որտեղ պատասխանող կառավարությունն ի կատար չէր ածել Եվրոպական հանձնաժողովի՝ դիմողներին իրենց հայրենի Զիլի չարտաքսելու մասին պահանջը: Դիմողները՝ ամուսնացած զույգը և նրանց երիտասարդ որդին, դիմել էին Շվեդիայի կառավարությանը՝ քաղաքական ապաստան և փախստական կարգավիճակ ստանալու համար, կապված առաջին դիմողի կողմից Զիլիում Պինոչետի ռեժիմի դեմ քաղաքական գործունեություն ծավալելու հետ: Նա պնդում էր, որ իրեն խոշտանգել են: Նրանց դիմումները մերժվել էին շվեդական իշխանությունների կողմից: 1989 թվականի հոկտեմբերի 5-ին նրանց անունից գանգատ էր ներկայացվել Եվրոպական հանձնաժողով: Ժամը ինն անց տաս րոպեին Շվեդական կառավարությունը հեռախոսով տեղեկացվել էր, որ Հանձնաժողովի որոշմամբ դիմողները չպետք է արտաքսվեն: Այդուհանդերձ, պարոն Կրուզ Վարասն այդ օրը, ավելի ուշ, ժամը 16.40-ին, արտաքսվել էր: Եվրոպական դատարանն այնուհետև պետք է որոշեր, թե արդյոք կառավարության կողմից Հանձնաժողովի պահանջը չկատարելը անհատական գանգատի իրավունքի (այդ ժամանակ Կոնվենցիայի հոդված 25-ը, իսկ այժմ՝ 34-ը) արդյունավետ իրականացումը չխոչընդոտելու պարտավորության խախտում էր: Դատարանը եզրակացրեց, որ հիշյալ կանոնը Կոնվենցիայի անդամ պետությունների համար պարտադիր կատարման ենթակա պարտավորություն չի առաջացնում⁶⁸: Ընդամենը տասը ծայնով ընդդեմ իննի Դատարանը որոշեց, որ գանգատի ապահովման միջոցների կիրառման պահանջն ի

⁶⁴ Պրակտիկայի մասին ուղեցույց. Գանգատի ապահովման միջոցների մասին դիմում, բաժին III (հավելված 3):

⁶⁵ Հատկ և բուրբանո Յերրերա, տես ծանոթագրություն 44-ում, էջ 652:

⁶⁶ Թիվ 15576/89, 20.3.91, (1992) 14 EHRR 1:

⁶⁷ Տե՛ս նույն տեղում:

⁶⁸ *Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas v Sweden)* գործը, թիվ 15576/89, 20.3.91, (1992) 14 EHRR 1, կետեր 94-103:

կատար չածելը Շվեդիայի կառավարության՝ Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված գանգատները չխոչընդոտելու պարտավորության խախտում չի հանդիսանում: Այնուամենայնիվ, այս մոտեցումը իրականում փոխվել է 2003 թվականին *Մամատկուլովը և Աբդուռասուլովիչն ընդդեմ Թուրքիայի (Mamatkulov and Abdurasulovic v Turkey)*⁶⁹ գործով վճռում: Այդ գործում Դատարանը հողված 34-ի խախտում արձանագրեց՝ կապված Թուրքիայի կառավարության կողմից գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին պահանջը չկատարելու հետ. խոսքը գնում էր ազգությամբ ուզբեկ դիմողներին Ուզբեկստան չհանձնելու մասին, որտեղ նրանք հետախուզվում էին նախագահի վրա ահաբեկչական հարձակում կատարելու մեղադրանքով և որտեղ նրանք կարող էին ենթարկվել մահապատժի: Դատարանն իր որոշումն ընդունեց 1999 թվականի մարտի 18-ին: Այնուամենայնիվ, Թուրքիայի կառավարությունը նրանց հանձնելու մասին որոշում ընդունեց հենց հաջորդ օրը և 1999 թվականի մարտի 27-ին նրանց հանձնեցին Ուզբեկստանի իշխանություններին: Թուրքիայի կառավարությունը սա հիմնավորեց նրանով, որ Ուզբեկստանի կառավարությունը երաշխավորել էր, որ դիմողները չեն ենթարկվի խոշտանգումների կամ մահապատժի: Դիմողներին հետագայում դատապարտվեցին ազատազրկման, սակայն դիմողների ներկայացուցիչներն ի վիճակի չէին կապ պահպանել նրանց հետ, և, հաշվի առնելով այդ հանգամանքը, Դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել հողված 34-ով երաշխավորված՝ անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի խախտում: Քննության առնելով մարդու իրավունքների այլ տարածաշրջանային և միջազգային մեխանիզմները⁷⁰ Դատարանը որոշեց, որ.

«Կոնվենցիայի անդամ ցանկացած պետություն, որից պահանջել են կիրառել գանգատի ապահովման միջոցներ, ենթադրյալ խախտման զոհին անվերականգնելի վնաս հասցնելուց խուսափելու համար, պետք է ի կատար ածի այդ միջոցառումները և ձեռնպահ մնա վերջնական վճռի հեղինակությունը խարխլելուն և արդյունավետությունը նվազեցնելուն ուղղված ցանկացած գործողությունից կամ անգործությունից»⁷¹:

Այսպիսով պետությունները *պարտավոր են* կատարել գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին պահանջը, չնայած պարզ չէ, թե արդյոք և ինչպես կարող է կամ պետք է Դատարանը ապահովի այդ պարտավորության կատարումը (սա թերևս այնպիսի հարց է, որը Նախարարների կոմիտեն պետք է պատրաստ լինի ստանձնելու, չնայած Կոնվենցիան նման իրավազորություն սահմանող դրույթ չի պարունակում)⁷²: Ավելին, հողված 34-ը խախտվել է, թե՛ ոչ, ակնհայտորեն կախված կլինի այն գնահատականից, թե արդյոք կանոն 39-ի դրույթն ի կատար չածելն իրականում խոչընդոտ է հանդիսացել անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի իրականացման համար⁷³:

2.4.11 Գործերի արագացված քննություն

Սովորական ընթացակարգի համաձայն՝ Դատարանը գործերը քննության է առնում այն հերթականությամբ, որով դրանք ներկայացվում են: Իհարկե, գրանցվելուց հետո այն ժամկետները, որի ընթացքում գործը կանցնի Դատարանի համակարգով, տարբեր են՝ կախված գործի հանգամանքներից և այն «ճանապարհից», որով այն կանցնի Դատարանում: Այդուհանդերձ, Դատարանը կարող է հրատապ գործերի առնչությամբ, բոլոր հնարավոր միջոցներով, ծանուցում ուղարկել պատասխանող կառավարությանը (կանոն 40): Դատարանը կարող է նաև

⁶⁹ Թիվ 46827/99 և թիվ 46951/99, 6.2.03 (ներկայումս գտնվում է Մեծ Պալատի վարույթում):

⁷⁰ Մասնավորապես՝ Արդարադատության միջազգային դատարանի վճիռը ԼաԳրանդի գործում (Գերմանիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) 2001 թվական, հունիսի 27:

⁷¹ *Մամատկուլովը և Աբդուռասուլովիչն ընդդեմ Թուրքիայի (Mamatkulov and Abdurasulovic v Turkey)* գործը, թիվ 46827/99 և թիվ 46951/99, 6.2.03 կետ 110:

⁷² Տե՛ս, որպես անալոգիա, Նախարարների խորհրդի որոշումը՝ DH (97) 335, 11.7.97 ի պատասխան *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)* թիվ 25781/94 միջպետական գործով Թուրքիայի՝ Եվրոպական հանձնաժողովի դատավարությանը մասնակցելու հրաժարմանը:

⁷³ Որպես հակադրություն՝ տե՛ս *Կոնկան և այլոք ընդդեմ Բելգիայի (Conka and Others v Belgium)* գործը, թիվ 51564/99, որոշում 13.3.01, (2002) 34 EHR 54 (որտեղ Դատարանը դիմողի՝ Սլովակիա տեղահանման հետ կապված հողված 34-ի խախտում չգտավ):

առաջնահերթություն տալ կոնկրետ գործերի (կանոն 41): Գործերի քննությունն արագացնելու պատճառներն սահմանված չեն Կանոնակարգում, հետևաբար, այս հարցը թողնված է Դատարանի հայեցողությանը: Եթե դիմողը դիմում է արագ քննության համար, նա վարույթի հնարավոր ամենավաղ փուլում պետք է Դատարան ներկայացնի բոլոր պատճառները:

Օրինակ՝ *Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v France)* գործի քննությունը Դատարանը, կանոն 41-ի համաձայն, արագացրեց բանտում գտնվող դիմողի ծեր և վատառողջ լինելու պատճառով: Գործը ներկայացվել էր 2001 թվականի հունվարի 12-ին, իսկ հունվարի 23-ին Դատարանը խնդրեց պատասխանող կառավարությանը ներկայացնելու տեղեկություններ և դիտողություններ դիմողի ազատագրվման վայրի պայմանների և ռեժիմի մասին⁷⁴:

*Սյորինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Soering v UK)*⁷⁵ գործն այն գործերից էր, որին Դատարանն (նախկին) առաջնահերթություն էր տվել. գանգատը ներկայացնելուց մինչև դատավճռի կայացումը տևեց 12 ամիս: *Սյորինգի* գործը վերաբերում էր դիմողին՝ Միացյալ Թագավորությունից Միացյալ Նահանգներ հանձնելու սպառնալիքին, որտեղ նրա դեմ մեղադրանք էր հարուցվելու մի հանցագործության կատարման մեջ, որի համար մահապատիժ էր նախատեսված: Այս գործն ակնհայտորեն արագ քննություն էր պահանջում Եվրոպական դատարանից: Գործի ժամանակագրությունը (համաձայն Արձանագրություն թիվ 11-ից առաջ գոյություն ունեցող համակարգ, որը բաղկացած էր ինչպես Եվրոպական հանձնաժողովից, այնպես էլ՝ Դատարանից) հետևյալն էր.

Գանգատը ներկայացվել է Եվրոպական հանձնաժողով 1988 թվականի հուլիսին:

Գործը հաղորդվել է պատասխանող կառավարությանը և նրանից պահանջվել է չարտաքսել դիմողին (համաձայն «Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին» ընթացակարգի) 1988 թվականի օգոստոսին:

Պատասխանող կառավարությունը ներկայացրել է իր առարկությունները 1988 թվականի սեպտեմբերին:

Դիմողը ներկայացրել է իր պատասխան առարկությունները 1988 թվականի հոկտեմբերին:

Հանձնաժողովն իրականացրել է գործի ընդունելիության և ըստ էության լսումները 1988 թվականի նոյեմբերին:

Հանձնաժողովը կայացրել է ընդունելիության մասին որոշումը 1988 թվականի նոյեմբերին:

Դիմողը և պատասխանող կառավարությունը ներկայացրել են լրացուցիչ առարկություններ 1988 թվականի դեկտեմբերին:

Հանձնաժողովի հոդված 31-ով պահանջված զեկույցը (գործի էության վերաբերյալ) ընդունվել է 1989 թվականի հունվարին:

Գործը հանձնվել է Դատարան 1989 թվականի հունվարին:

1989 թվականի հունվարին Դատարանը սահմանել է, որ դիմողը չպետք է հանձնվի (համաձայն «Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին» ընթացակարգի):

Դիմողի և պատասխանող կառավարության փաստարկները ներկայացվել են 1989 թվականի մարտին:

1989 թվականի մարտին «Էմնիսթի ինթրնեշնլը» թույլտվություն է խնդրել գրավոր դիտողություններ ներկայացնելու համար:

1989 թվականի ապրիլին «Էմնիսթի ինթրնեշնլին» թույլտվություն է շնորհվել՝ գրավոր դիտողություններ ներկայացնելու համար:

1989 թվականի ապրիլին կողմերը ներկայացրել են լրացուցիչ ապացույցներ և առարկություններ:

Դատալսումը տեղի է ունեցել 1989 թվականի ապրիլին:

Դատարանը կայացրել է վճիռը 1989 թվականի հուլիսին:

Առաջնահերթություն ստացած մեկ այլ գործ է *Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (D v UK)*⁷⁶ գործը, որն առնչվում էր ՋԻԱՀ հիվանդության ծանր փուլում գտնվող հիվանդ դիմողին Միացյալ Թագավորությունից Սուրբ Քիթս տեղափոխելուն: Հանձնաժողովը և Դատարանն այս գործը քննեցին 15 ամսում.

⁷⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի մամուլի հաղորդագրությունը, 23.1.01:

⁷⁵ Թիվ 14038/88, 7.7.89, Շարք Ա, թիվ 161, (1989) 11 EHRR 439:

⁷⁶ Թիվ 30240/96, 2.5.97, (1997) 24 EHRR 423:

Գանգատը ներկայացվել է Եվրոպական հանձնաժողով 1996 թվականի փետրվարին և պատասխանող կառավարությունը երաշխիքներ է տվել, որ դիմողը գործի քննության ընթացքում արտաքսվի:

Գործը հաղորդվել է պատասխանող կառավարությանը 1996 թվականի մարտին:

Պատասխանող կառավարությունը ներկայացրել է իր առարկությունները 1996 թվականի մարտին:

Դիմողը ներկայացրել է իր պատասխան առարկությունները 1996 թվականի ապրիլին:

Հանձնաժողովն իրականացրել է գործի ընդունելիության և ըստ էության լսումները 1996 թվականի ապրիլին:

Հանձնաժողովը կայացրել է ընդունելիության մասին որոշումը 1996 թվականի հունիսին:

Դիմողը և պատասխանող կառավարությունը ներկայացրել են լրացուցիչ առարկություններ 1996 թվականի օգոստոսին:

Հանձնաժողովի հոդված 31-ով պահանջվող զեկույցը (գործի էության վերաբերյալ) ընդունվել է 1996 թվականի հոկտեմբերին:

Գործը հանձնվել է Դատարան 1996 թվականի հոկտեմբերին:

1996 թվականի հոկտեմբերին Դատարանը սահմանել է, որ դիմողը չպետք է արտաքսվի (համաձայն «Գանգատի ապահովման միջոցների կիրառման մասին» ընթացակարգի):

Դիմողի և պատասխանող կառավարության փաստարկները ներկայացվել են 1997 թվականի հունվարին:

Դատալսումը տեղի է ունեցել 1997 թվականի փետրվարին:

Դատարանը կայացրել է վճիռը 1997 թվականի մայիսին:

Կանոն 41-ը կիրառվել է՝ *Մուիսելն ընդդեմ Ֆրանսիայի (Mouisel v France)* գործին առաջնահերթություն տալու համար, որն վերաբերում էր քաղցկեղով տառապող կալանավորի շարունակվող կալանքին: Գանգատը ներկայացվել էր 2000 թվականի հոկտեմբերին և դրան առաջնահերթություն տալու մասին որոշում էր ընդունվել 2001 թվականի ապրիլին: Գործն ընդունելի էր ճանաչվել 2002 թվականի մարտին, իսկ վճիռը կայացվել էր 2002 թվականի նոյեմբերին⁷⁷: Սակայն, Եվրոպական դատարանի կողմից ամենաարագ քննված գործը մնում է *Պրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Pretty v UK)*⁷⁸ գործը. այդ գործում անբուժելի հիվանդությամբ տառապող դիմողն ինքնասպանության օժանդակության իրավունք պահանջելու անհաջող փորձ էր կատարել: Եվրոպական դատարանը գործը քննեց չորս ամսից էլ պակաս ժամկետում. այն Դատարան էր ներկայացվել 2001 թվականի դեկտեմբերին, իսկ վճիռը կայացվել էր 2002 թվականի ապրիլի 29-ին:

2.4.12 Մեկ վարույթում գործերի միացումը

Դատարանը կարող է որոշում ընդունել գործերը մեկ վարույթում միացնելու մասին (Կանոն 42, նախկին՝ Կանոն 43) այն դեպքերում, երբ դրանք նույնանման կամ շատ մոտ խնդիրներ են բարձրացնում: Դիմողներին խորհուրդ է տրվում դիմել Դատարանին իրենց գործն այլ գործերի հետ մեկ վարույթում միացնելու խնդրանքով, եթե դրանք նույն խնդիրներն են արժարժում և եթե հավանականություն կա, որ դա ավելի ուժեղ կդարձնի գործը: Օրինակ՝ համանման գործերի մեկ վարույթում միացումը կարող է ցույց տալ Դատարանին, որ բարձրացված խնդիրը միակը չէ, այլ կարող է հանգեցնել Կոնվենցիայի կրկնվող խախտումների: Դատարանը կարող է գործերը միացնելու որոշում ընդունել կողմերից մեկի խնդրանքով կամ իր սեփական նախաձեռնությամբ: Դատարանը կարող է նաև որոշել, որ գործերը լսվեն միաժամանակ, անկախ այն բանից, միացված են դրանք, թե՛ ոչ (կանոն 42 (2)):

2.4.13 Փաստաթղթերի հրապարակայնությունը

Գանգատի առնչությամբ Դատարան ներկայացրած բոլոր փաստաթղթերը (բացառությամբ բարեկամական կարգավորման բանակցություններին առնչվողներից) հրապարակային են, եթե պալատի նախագահն այլ բան չի որոշում⁷⁹: Նախագահը կարող է սեփական նախաձեռնությամբ հանրության համար սահմանափակել փաստաթղթերի հրապարակայնությունը, կողմերից որևէ

⁷⁷ *Մուիսելն ընդդեմ Ֆրանսիայի (Mouisel v France)* գործը, թիվ 67263/01, 14.11.02, (2004) 38 EHRR 34:

⁷⁸ Թիվ 2346/02, 29.4.02, (2002) 35 EHRR 1:

⁷⁹ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 40 (2)-ը:

մեկի կամ «գործին առնչվող ցանկացած այլ անձի» խնդրանքով (կանոն 33(1)): Նախագահը կարող է արգելել հրապարակայնությունը ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության շահերից ելնելով, կամ երբ դա պահանջում են անչափահասների շահերը կամ կողմերի անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը կամ այն չափով, որքանով նախագահի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է հատուկ հանգամանքներում, երբ հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը (կանոն 33(2)): Եթե կողմը պահանջում է, որ որևէ փաստաթուղթ գաղտնի լինի, պետք է ներկայացնի հիմնավորումներ և նշի, թե արդյոք փաստաթուղթն ամբողջությամբ, թե միայն դրա որևէ մասը պետք է գաղտնի լինի (կանոն 33(3)):

Հրապարակայնության չափի խնդիրը նոր է Կոնվենցիայի համակարգում. այն ներմուծվել է 1998 թվականի նոյեմբերին ընդունված Արձանագրություն թիվ 11-ով: Հին համակարգում Եվրոպական հանձնաժողովը վարույթի ընթացքում կիրառում էր գաղտնիության խիստ կանոններ: Հրապարակայնության վերաբերյալ ընդունված նոր կանոնները թույլ են տալիս դիմողներին կամ նրանց ներկայացուցիչներին դիմելու կոնկրետ փաստաթղթերի, ներառյալ կառավարության առարկությունների, պատճենները ստանալու համար՝ Դատարանի վարույթում գտնվող ցանկացած գործի շրջանակներում (որոնք կարելի է վերցնել Դատարանից կամ ստանալ փոստով կամ էլեկտրոնային փոստով)⁸⁰: Սա կարող է խիստ օգտակար լինել այն դեպքում, երբ կան ներկայացվող զանգատին համանման գործեր, որոնք արդեն գրանցված են Դատարանում: Դատարանն իր գործերի ընտրանին հրապարակում է ամենամսյա *Տեղեկատվական ծանուցագրում*, որը ներառում է այն գործերը, որոնք հաղորդվել են պատասխանող կառավարությանը:

2.4.14 Դիմողների և նրանց ներկայացուցիչների անձեռնմխելիությունը

*Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի և դատարանի վարույթներին մասնակցող անձանց վերաբերյալ 1996 թվականի եվրոպական համաձայնագիրը*⁸¹ (տես հավելված 16-ը) մի շարք արտոնություններ է նախատեսում Եվրոպական դատարանում վարույթին մասնակցող անձանց համար: Համաձայնագիրը վերաբերում է բոլոր այն անձանց, ովքեր մասնակցում են վարույթին՝ ներառյալ կողմերը, նրանց ներկայացուցիչները, խորհրդատուները, վկաները և փորձագետները (հոդված 1): Համաձայնագիրն անձեռնմխելիություն է նախատեսում Դատարանում արված բոլոր բանավոր և գրավոր հայտարարությունների և Դատարան ներկայացրած փաստաթղթերի համար, սակայն դա չի տարածվում Դատարանից դուրս արված հայտարարությունների վրա (հոդված 2):

Կառավարությունները պարտավոր են հարգել դիմողների և նրանց ներկայացուցիչների՝ Դատարանի հետ անկաշկանդ մամակագրություն վարելու իրավունքը, և կան հատուկ դրույթներ կալանքի տակ գտնվող անձանց իրավունքները պաշտպանելու համար (հոդված 3): Այս դրույթները հիմնականում համընկնում են այն պարտավորությունների հետ, որ Դատարանը ներառել է ինչպես հոդված 8-ում (նամակագրության իրավունքը հարգելը), այնպես էլ՝ հոդված 34-ում (անհատական զանգատ ներկայացնելու իրավունքը): Կողմերին և նրանց ներկայացուցիչներին պետք է ազատ տեղաշարժվելու հնարավորություն տրվի, որպեսզի նրանք կարողանան մասնակցել Դատարանում վարույթին (հոդված 4): Սակայն Դատարանը պետք է վերացնի անձեռնմխելիությունը, եթե դրա կիրառումը որևէ կերպ կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (հոդված 5):

2.4.15 Դատավորի նիստին մասնակցելու իրավունքի սահմանափակումը և նիստին մասնակցելուց ազատելը

⁸⁰ Տե՛ս Դատարանի քարտուղարության ծանուցումը ըստ թղթապանակների 7.11.02:

⁸¹ Եվրոպական պայմանագրերի շարք. թիվ 161: Ընդունվել է 5.3.96-ին և ուժի մեջ մտել 1.1.99-ին:

Դատարանի կանոնակարգի կանոն 28(2)-ով նախատեսվում է նիստին Դատավորի մասնակցության անհնարինության հետևյալ դեպքերը.

- եթե դատավորն անձնական շահ ունի գործում, կամ
- եթե դատավորը նախկինում հանդես է եկել որպես գործով կողմի կամ շահագրգիռ անձի ներկայացուցիչ, փաստաբան կամ խորհրդատու, կամ
- եթե դատավորը նախկինում հանդես է եկել որպես տրիբունալի կամ փաստահավաք առաքելության անդամ կամ այլ պաշտոնում:

*Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)*⁸² գործում, օրինակ, Դատարանի երեք դատավորներ (երկու թուրք և մեկ կիպրոսցի) պետություն-կողմերի բացարկների հետևանքով չմասնակցեցին վարույթին: Նրանց գործին մասնակցությունից հեռացնելը չպատճառաբանվեց:

2.5 ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.5.1 Ձեկուցող դատավորը

Հոդված 34-ի համաձայն ներկայացված յուրաքանչյուր անհատական գանգատ համապատասխան բաժանմունքի նախագահը մակագրում է Դատարանի դատավորներից մեկին՝ «զեկուցող դատավորին», որի խնդիրը գործի ուսումնասիրությունն է (կանոն 49): Ձեկուցող դատավորի ինքնությունը դիմողին չի բացահայտվում:

Ձեկուցող դատավորը կարող է դիմել կողմերից յուրաքանչյուրին սահմանված ժամկետում լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր կամ այլ համապատասխան նյութեր ներկայացնելու պահանջով: Ձեկուցող դատավորն է որոշում, թե գանգատի ընդունելիությունը պետք է որոշի երեք դատավորից կազմված կոմիտեն, թե յոթ դատավորից կազմված պալատը:

Արձանագրություն թիվ 14-ով նախատեսված փոփոխությունները. Գործի միանձնյա քննությունը.

Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տես բաժին 1.2.2) Դատարանը կարող է նիստ գումարել նաև մեկ դատավորի կազմով (Արձանագրություն թիվ 14-ի հոդվածներ 6 և 7, որոնցով փոփոխության է ենթարկվում Կոնվենցիայի հոդված 27-ը): Սակայն, ամրագրված է, որ երբ գործը քննվում է միանձնյա, դատավորը չի քննում այն գանգատները, որոնք ուղղված են այն պետության դեմ, որի կողմից նա ընտրվել է: Երբ Դատավորը միանձնյա է քննում գործը, նրան օժանդակում են զեկուցողները՝ Դատարանի քարտուղարության պաշտոնյաները (Արձանագրություն թիվ 14-ի հոդված 4-ը, որով փոփոխության է ենթարկվում հոդված 25-ը):

2.5.2 Կոմիտեի կողմից ընդունելիության մասին որոշման ընդունումը

Կոնվենցիայի շրջանակներում ներկայացրած այն գործերը, որոնք առաջին հայացքից չեն բավարարում ընդունելիության պահանջներին, զեկուցող դատավորն ուղարկում է երեք դատավորներից կազմված կոմիտեին, որը կարող է գործն անընդունելի ճանաչել՝ պայմանով, որ որոշումն ընդունվի միաձայն (հոդված 28, կանոն 53): Ձեկուցող դատավորը և պատասխանող պետության կողմից ընտրված դատավորը կարող են հրավիրվել մասնակցելու կոմիտեի քննարկումներին:

Դիմողները Կոմիտեի որոշման մասին տեղեկացվում են տիպային նամակով (կանոն 53 (2)), որը տվյալ գանգատի առնչությամբ պատճառաբանություններ չի պարունակում, այլ պարունակում է միայն ֆորմալ պատասխան, որով հղում է կատարվում հոդված 35-ով նախատեսված ընդունելիության չափանիշներին (տես օրինակը հավելված 9-ում): Կոմիտեները Կոնվենցիայի համակարգում ամենաթույլ գործերը գտելու գործառույթ են իրականացնում: Օրինակ՝ 2003 թվականին անընդունելի ճանաչված 16,724 գործերից 16,356-ը⁸³ քննվել են կոմիտեի կողմից:

⁸² Թիվ 25781/94, 10.5.01, (2002) 35 EHRR 30:

⁸³ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի գործունեության ամփոփումը, էջ 33:

Կոմիտեի որոշումը վերջնական է⁸⁴: Կոմիտեի և պալատի կողմից անընդունելիության մասին ընդունված որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Դիմողները կարող են դժգոհ մնալ, եթե իրենց գործն անընդունելի ճանաչվի կոմիտեի կողմից՝ մասնավորապես կոնկրետ հիմնավորումների բացակայության պատճառով. սակայն նրանք միևնույն է չեն կարող լրացուցիչ պատճառաբանություններ ստանալ կոմիտեի որոշման վերաբերյալ:

Եթե կոմիտեին չի հաջողվում միաձայն որոշման հանգել գանգատի անընդունելիության վերաբերյալ, ապա այն հանձնվում է պալատի քննությանը:

Արձանագրություն 14-ով նախատեսված փոփոխությունները. «Ակնհայտորեն լավ հիմնավորված» գործեր

Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տես բաժին 1.2.2)՝ կոմիտեն իրավասու է գործն ընդունելի ճանաչել և միևնույն ժամանակ ըստ էության վճիռ կայացնել, եթե գործի հիմք հանդիսացող հարցը, որը վերաբերում է Կոնվենցիայի մեկնաբանությանը կամ կիրառմանը, արդեն իսկ Դատարանի կողմից լուծում է գտել իր նախադեպում (Արձանագրություն թիվ 14-ի հոդված 8-ը, որով փոփոխության է ենթարկվում հոդված 28-ը): Այս դրույթը ներմուծում է «ակնհայտորեն լավ հիմնավորված» գանգատների (որոնք հայտնի են որպես «կլոն» կամ «կրկնակի խախտումների») քննության առավել պարզեցված և արագացված ընթացակարգ:

2.5.3 Պալատի կողմից ընդունելիության մասին որոշման ընդունումը

Եթե կոմիտեի կողմից, համաձայն հոդված 28-ի, որոշում չի ընդունվում, դատարանը պետք է որոշում կայացնի գործի ընդունելիության վերաբերյալ և վճռի գործն ըստ էության (հոդված 29, կանոն 54):

Պալատը կարող է անընդունելի ճանաչել գործը կամ հանել այն գործերի ցուցակից: Այդ դեպքերում պալատը կայացնում է պատճառաբանված որոշում՝ բացատրելու նման որոշման հիմքերը (տես ստորև՝ բաժին 2.5.8-ը): Ինչպես և կոմիտեի՝ անընդունելիության մասին որոշումները, պալատի անընդունելիության մասին որոշումը դիմողը բողոքարկելու իրավունք չունի:

Բացի այդ, պալատը կարող է կողմերից յուրաքանչյուրից պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր, կարող է հրավիրել՝ ներկայացնելու լրացուցիչ գրավոր առարկություններ կամ գանգատի վերաբերյալ ծանուցել պատասխանող կառավարությանը (ընթացակարգը գործնականում հայտնի է որպես գործի հաղորդում):

2.5.4 Գործի հաղորդումը

Եթե չկան գանգատն անընդունելի ճանաչելու հստակ հիմքեր, պալատը գործը հաղորդում է պատասխանող կառավարությանը և խնդրում, որպեսզի կառավարությունը ներկայացնի իր գրավոր առարկությունները (իսկ այնուհետև հրավիրում դիմողին՝ ներկայացնելու պատասխան առարկություններ) (կանոն 54(2)(բ)):

Երբ գործը հաղորդվում է պատասխանող կառավարությանը, Դատարանը վերջինիս տրամադրում է նաև Դատարանի կողմից մշակված փաստերի շարադրանքը և պահանջում սահմանված ժամկետում պատասխանել կոնկրետ հարցերի: Փաստերի շարադրանքն իրենից ներկայացնում է գործի փաստերի համառոտ նկարագիրը, դիմողի՝ ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառելուն ուղղված քայլերը, համապատասխան ներպետական օրենսդրության և արակտիկայի ամփոփ նկարագիրը, ինչպես նաև դիմողի՝ Կոնվենցիայի հիման վրա ներկայացված գանգատի էությունը: Կառավարությունն իր առարկությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետն իրավունք ունի երկարացնել մեկ, հնարավոր է նաև մի քանի անգամ. նույնը վերաբերում է նաև դիմողին: Միևնույն ժամանակ փաստերի շարադրանքը և

⁸⁴ Հոդված 28, կանոն 53 (2):

հարցերն ուղարկվում են դիմողին՝ ի ծանուցում, որ գործը հաղորդվել է կառավարությանը. դիմողը նաև տեղյակ է պահվում, թե ինչ ժամկետներ են տրվել կառավարությանը պատասխանի համար: Դատարանի մշակած փաստերի շարադրանքը և հարցերը դիմողին կարող են ակնարկել գանգատի վերաբերյալ Դատարանի նախնական դիրքորոշումը: Եթե Կառավարությանն ուղղված Դատարանի հարցաշարը չի ներառում դիմողի գործի ինչ-որ կողմեր, ապա ամենայն հավանականությամբ, Դատարանը գնահատել է, որ դրանք թույլ կողմեր են (և հետևաբար դրանց վերաբերյալ կառավարության պատասխանը ստանալու անհրաժեշտությունը չկա): Մյուս կողմից, Դատարանը կարող է կառավարությանը կոնկրետ հարցեր ուղղել Կոնվենցիայի կոնկրետ հոդվածի առնչությամբ, որը կարող է ակնարկներ պարունակել այն մասին, թե Դատարանն ինչպես է վերաբերում գործի էությանը:

Գործը՝ կառավարությանը հաղորդելուց հետո Դատարանը կարող է պահանջել, որ ներկայացուցիչ չունեցող դիմողին ներկայացնի փաստաբանը, ով ունի Կոնվենցիայի անդամ պետություններից մեկում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու իրավունք կամ ով նախագահից ստացել է համապատասխան թույլտվություն (կանոն 36(2)):

Համաձայն կանոն 54 Ա (1)-ի, երբ որոշվում է գործը՝ պատասխանող կառավարությանը ծանուցելու հարցեր պալատը կարող է որոշել նաև քննության առնել գործի ընդունելիության և էության հարցերը միաժամանակ: Համապատասխանաբար, այդ փուլում կողմերը հրավիրվում են ներկայացնելու արդարացի փոխհատուցման և բարեկամական կարգավորման վերաբերյալ իրենց փաստարկները (տես, ստորև՝ բաժին 2.5.9-ը):

2.5.5 Իրավաբանական օգնություն

Եվրոպական դատարանը տրամադրում է իրավաբանական օգնություն՝ ներկայացուցիչների վարձատրության և ճանփորդական ծախսերի և դիմողների կամ նրա ներկայացուցչի կողմից կատարված այլ ծախսերի համար (կանոն 91-6): Իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել այն պահից, երբ արդեն պատասխանող կառավարությունից ստացվել են գանգատի ընդունելիությանը վերաբերող առարկությունները (կամ լրացել է դրանք ներկայացնելու ժամանակը) (կանոն 91(1)): Իրավաբանական օգնություն ստանալու մասին դիմում ներկայացնելու դեպքում, դիմողին ուղարկվում է Դիմողի միջոցների մասին Դատարանի հայտարարագիրը՝ երեք օրինակից (տես հավելված 8-ը): Ֆինանսական միջոցների գնահատումն իրականացնում է համապատասխան *ներպետական* մարմինը (կանոն 93(1)): Հավելված 11-ում կցված է Կոնվենցիայի անդամ մի շարք պետությունների ներպետական մարմինների հետ կապվելու համար անհրաժեշտ տվյալները: Համապատասխան ներպետական մարմնի հավաստագիրը ստանալուց հետո ձևը պետք է ներկայացնել Եվրոպական դատարան: Պատասխանող կառավարությանն ուղարկվում է իրավաբանական օգնության դիմումի պատճեն և առաջարկվում գրավոր դիտողություններ ներկայացնել դրա կապակցությամբ (կանոն 93(2)):

Իրավաբանական օգնություն. Միացյալ Թագավորությունը

Անգլիայից և Ուելսից դիմողներին Դատարանն առաջարկում է լրացնել Դիմողի միջոցների մասին Դատարանի հայտարարագրի ձևն ու համապատասխան ներպետական իրավաբանական օգնության ֆինանսական ձևը (CLS MEANS 1-4 և Form L17՝ եթե դիմողն աշխատում է), և լրացված ձևերն ուղարկել Իրավաբանական ծառայությունների հանձնաժողով՝ ուսումնասիրման և հավաստման համար: Անգլիայի և Ուելսի պարագայում ձևերը պետք է ուղարկել՝ Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովի (Legal Services Commission) Լոնդոնի տարածքային գրասենյակ (London Regional Office)

29-37 Red Lion Street

London WC1R 4PP

DX: LDE 170 LONDON

Հեռախոս: 020 7759 1500

Ֆաքս: 020 7759 1888

Շոտլանդիայից դիմողները ձևերը պետք է ուղարկեն հավաստագրման`
Իրավական օգնության շոտլանդական խորհուրդ (The Scottish Legal Aid Board)
44 Drumsheugh Gardens
Edinburgh EH3 7SW
Հեռախոս: 0131 226 7061
Ֆաքս: 0131 220 4879

Հյուսիսային Իռլանդիայից դիմողները ձևերը պետք է ուղարկեն հավաստագրման`
Հյուսիսային Իռլանդիայի Իրավաբանական ծառայությունների հանձնաժողով (Northern Ireland Legal Services Commission)
2nd Floor, Waterfront Plaza
8 Laganbank Road
Marys Meadow
Belfast
BT 1 3BN
Հեռախոս: 028 9024 6441
Ֆաքս: 028 9040 8990

Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովը գնահատում է դիմողի ֆինանսական միջոցները նույն ընթացակարգով, ինչ որ ներպետական վարույթների շրջանակներում ներկայացված քաղաքացիական գործերով իրավաբանական օգնության մասին դիմումները: Եթե դիմողը ներպետական վարույթներում շրջանակներում իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի, Հանձնաժողովն այդ հաստատելու համար դիմողին է ուղարկում «Կարիքավորության հավաստագիր»: Հակառակ դեպքում, հավաստագրում նշվում է, որ դիմողը որակավորված կհամարվի իր կողմից որոշ ներդրումների պարագայում կամ էլ` չի որակավորվի:

Ինչպես Դիմողի միջոցների հայտարարագրի լրացված ձևը, այնպես էլ` Կարիքավորության մասին Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովի հավաստագիրը, հնարավորությա դեպքում, սահմանված ժամկետներում, պետք է ուղարկվեն Դատարան: Հաճախ է պատահում, որ Դատարանի կողմից սահմանված ժամկետը բավարար չէ ձևերը լրացնելու և Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովի հավաստագրերը ստանալու համար. այս դեպքում փաստաբաններն այդ մասին պետք է տեղյակ պահեն Դատարանին: Դատարանը իրավաբանական օգնության դիմումն ուղարկում է կառավարությանը` կարծիքի:

Դատարանն իրավաբանական օգնության մասին դիմումները քննելիս (համաձայն կանոն 92-ի), երկու չափանիշ է կիրառում.

ա. հավաստիանում է, որ օգնությունն անհրաժեշտ է գործի պատշաճ քննության համար,
բ. դիմողը բավարար միջոցների չի տիրապետում գործի հետ կապված ծախսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հոգալու համար:

Գործնականում, եթե ներպետական մարմինը հավաստում է օգնություն ստանալու համար դիմողի կարիքը, ապա Դատարանը, հիմնականում, շնորհում է իրավաբանական օգնությունը, եթե չկան առանձնահատուկ պատճառներ, որոնք կստիպեին Դատարանին չանել դա: Սակայն, պետք է հիշել, որ նույնիսկ, եթե դիմողը ներպետական ատյաններում ֆինանսական տեսանկյունից չի որակավորվում որպես իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձ, Եվրոպական դատարանը, միևնույն է, կարող է տրամադրել նրան այդ օգնությունը: Այսպիսով` խորհուրդ է տրվում դիմել Դատարան, եթե գտնում եք, որ դիմողն իրականում չի կարող իրեն թույլ տալ հոգալ գործի հետ կապված ծախսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն: Այն հարցը, թե որքանով հաշվի կառնվի դիմողի ընտանիքի այլ անդամների եկամուտը, թողնված է Դատարանի հայեցողությանը: Դատարանը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել

իրավաբանական օգնության տրամադրումը կամ փոփոխել դրա պայմանները, եթե գտնի, որ այդպիսի օգնություն տրամադրելու հիմքերն այլևս առկա չեն (կանոն 96):

Իրավաբանական օգնության տրամադրումը ռետրոսպեկտիվ բնույթ ունի և դատավարության յուրաքանչյուր փուլի համար գոյություն ունի վճարների հաստատագրված սանդղակ: Եվրոպական դատարանը դիմողներից երբեք չի պահանջում վճարումներ կատարել, ինչպես երբեմն պատահում է ներպետական վարույթներում:

Իրավաբանական օգնության առաջարկներն ուղարկվում են իրավաբանին դատավարության յուրաքանչյուր փուլում, և վերջինս պետք է ստորագրի և վերադարձնի դրանք: Գումարները վճարվում են բանկային փոխանցումների միջոցով: Իրավաբանական օգնության չափը բավականին համեստ է (տես վճարումների ծավալը հավելված 10-ում), և հետևաբար այն պետք է համարել մի փոքր նպաստ դիմողի ծախսերին և ծախքերին, և ոչ թե արված աշխատանքի դիմաց վարձատրություն, թեկուզ և ողջամտության սահմաններում: Եվ այդուհանդերձ, հնարավորության դեպքում, պետք է անպայման դիմել իրավաբանական օգնության համար այն պատճառով, որ այն կծածկի Դատարանի ցանկացած դատալսման հետ կապված ողջամիտ ծախսերը, որոնք երբեմն կարող են զգալի լինել: Եթե Դատարանը որոշի դատալսում անցկացնել գանգատի ընդունելիության և էության վերաբերյալ (դատալսումների խնդիրը տես բաժին 3.5-ում), ստրասբուրգյան իրավաբանական օգնությունը կծածկի դիմողի և նրա փաստաբանի ողջամիտ ուղևորության և բնակության ծախսերը (կանոն 94(2))՝ ներառելով, օրինակ, Ստրասբուրգ ուղևորվելու տոմսի, ինչպես նաև մեկ գիշեր հյուրանոցում մնալու ծախսերը:

Իրավաբանական օգնությունը կարող է ներառել մեկից ավելի իրավաբանների ծախսերը (կանոն 94(1)): Սակայն, Դատարանի սովորական գործելակարգը նախատեսում է օգնություն միայն մի իրավաբանի ծախսերի համար, եթե, իհարկե, հանգամանքները բացառիկ չեն:

Այն դիմողներին, ովքեր իրենք են ներկայացնում իրենց և ուն շնորհվում է իրավաբանական նպաստ, Դատարանը փոխհատուցում է նրանց ողջամիտ ծախսերը, սակայն կատարված աշխատանքներին համարժեք «վարձ» չի նախատեսում:

2.5.6 Կառավարության առարկությունները և դիմողի պատասխան առարկությունները

Կառավարության գրավոր առարկությունների պատճեն Դատարանն ուղարկում է դիմողին: Դիմողը կարող է (սահմանված ժամկետներում) ներկայացնել իր պատասխան առարկությունները: Առարկությունների պարտադիր ձև սահմանված չէ, սակայն Դատարանն ընդունել է *Գրավոր միջնորդությունների մասին պրակտիկայի ուղեցույց* (տե՛ս Չավելված 3-ի մուգ տեքստը), որոնց պետք է հետևեն կողմերն իրենց գրավոր առարկությունները ձևակերպելիս: Դիմողի պատասխան առարկությունները պետք է ներառեն՝ (ա) գործի փաստերի մասին ցանկացած լրացուցիչ դիտողություններ և (բ) ընդունելիության և գործի էության վերաբերյալ իրավաբանական փաստարկներ: Ինչ վերաբերում է գործի փաստերին, ապա Պրակտիկայի մասին ուղեցույցը նշում է, որ եթե կողմը չի հերքում քարտուղարության մշակած փաստերի շարադրանքի մեջ նշված փաստերը, ապա նրա դիտարկումները կարող են սահմանափակվել այդ մասին համառոտ նշումով: Կողմը, այնուամենայնիվ, փաստերի շարադրանքի ցանկացած մասի վերաբերյալ կարող է ներկայացնել իր առարկությունները կամ լրացուցիչ պնդումները: Եթե դիմողը հերքում է պատասխանող կառավարության ներկայացրած փաստերից որևէ մեկը, ապա պետք է հստակ նշի, թե որ փաստերը չի հերքում և իր առարկությունները ներկայացնի միայն վիճելի կետերի շուրջ: Պրակտիկայի մասին ուղեցույցը նաև նշում է, որ եթե գործի փաստական կամ իրավական կողմերի առնչությամբ կոնկրետ հարցեր են ուղղվում կողմին, ապա վերջինս իր իրավաբանական փաստարկները պետք է սահմանափակի այդ հարցերով: Անշուշտ էական է, որ իր պատասխան առարկություններում դիմողը հերքի բոլոր այն փաստարկները, որոնք կառավարության կողմից բարձրացվում են գանգատի անընդունելիությունն ապացուցելու նպատակով, հատկապես՝ կապված ներպետական իրավական միջոցների սպառման և վեցամսյա ժամկետի կանոնի հետ:

Պրակտիկայի մասին ուղեցույց. գրավոր միջնորդություններ

Պրակտիկայի մասին ուղեցույցի հիմնական դրույթներն են՝

- Պետք է պահպանել միջնորդություններ ներկայացնելու համար սահմանված ժամկետները. կարելի է դիմել այդ ժամկետները երկարաձգելու համար (այդ դիմումները պետք է ուղարկվեն ժամանակին, ժամկետը լրանալուց առաջ) համապատասխան հիմնավորումների հետ միասին:
- Բոլոր միջնորդությունները երեք օրինակից (գումարած բոլոր հավելյալ փաստաթղթերը) պետք է ներկայացվեն Դատարան (հնարավորության դեպքում մեկ օրինակ պետք է ներկայացնել ֆաքսով):
- Միջնորդությունները կարելի է Դատարան ներկայացնել ֆաքսով:
- Գաղտնի փաստաթղթերը պետք է ուղարկել պատվիրված փոստով:
- 30 էջը գերազանցող ցանկացած միջնորդություն պետք է ուղեկցվի դրա համառոտագրով:
- Միջնորդությանը կցված յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ներկայացնել առանձին հավելվածով:

Պրակտիկայի մասին ուղեցույցը առաջարկում է միջնորդությունների հետևյալ ձևաչափը`

- Նշել գործի անունը և զանգատի համարը` վերնագրի հետ մեկտեղ (օրինակ` «Ընդունելիության վերաբերյալ կառավարության առարկությունների պատասխան»):
- Ներկայացնել Ա4 ֆորմատի թղթի վրա (առնվազն 3.5 սմ լուսանցքով):
- Ցանկալի է ներկայացնել տպագիր ձևով:
- Բոլոր համարները պետք է գրվեն թվերով:
- Պետք է բաժանված լինի համարակալած պարբերությունների:
- Էջերը պետք է հաջողական համարակալում ունենան:
- Յուրաքանչյուր փաստաթղթի կամ դրանում նշված ապացույցի վերաբերյալ պետք է հղում նախատեսել:
- Բաժանել հետևյալ վերնագրերով բաժինների` Փաստեր, Ներպետական օրենսդրություն [և Պրակտիկա], Բողոքներ, Օրենք և Դատարանից կամ ցանկացած այլ կողմից ստացված հարցերի պատասխանները առանձին վերնագրի ներքո:

2.5.7 Գործի ընդունելիության մասին լսումներ

Հնարավոր է, որ պալատը լսում անցկացնի` որոշելու զանգատի ընդունելիության հարցը (Կանոն 54(4)): Ընդունելիության մասին լսումներ ժամանակին հաճախ էին անցկացվում, սակայն, նոր Դատարանի պրակտիկայի համաձայն, նման լսումներ հազվադեպ են անցկացվում` հաշվի առնելով Դատարանի վճռին սպասող գործերի ահռելի ծավալը: Լսում անցկացնելու մասին որոշումը պալատը կարող է ընդունել սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի խնդրանքով: Եթե դիմողն ունի կոնկրետ պատճառներ` ենթադրելու, որ առավել մեծ հաջողության կհասնի ընդունելիության մասին լսման ժամանակ, այլ ոչ թե ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, վերջինս պետք է Դատարանին ներկայացնի այդ լսման անհրաժեշտությունը հիմնավորող պատճառներ: Ընդունելիության հարցով լսումից առաջ Դատարանը կարող է կողմերին կոնկրետ հարցեր ուղղել` վեճի առարկան հստակեցնելու նպատակով: Ընդունելիության հարցով լսումը սովորաբար անց է կացվում միայն այն դեպքում, երբ գործը բարդ կամ նոր հարցեր է բարձրացնում:

Եթե անց է կացվում ընդունելիության հարցով լսում, կողմերից պահանջվում է նաև անդրադառնալ գործի էությունից բխող հարցերին (կանոն 54(3)): Ստորև քննության է առնվում բանավոր լսման` Դատարանի սահմանած ընթացակարգը: Ընդունելիության հարցով լսումների բանավոր վիճաբանությունների կարգը հետևյալն է` կառավարությունը սկսում է, իսկ դիմողը` պատասխանում (զանգատի` ըստ էության լսման ժամանակ առաջինը հանդես է գալիս դիմողը. տե՛ս, ստորև, բաժին 3.5-ը):

2.5.8 Պալատի` ընդունելիության մասին որոշումները

Գանգատը՝ պատասխանող կառավարությանը ծանուցելուց և կողմերի ներկայացրած գրավոր առարկությունները (կամ բանավոր առարկությունները, երբ դա տեղին է) քննության առնելուց հետո պալատը հրապարակում է ընդունելիության մասին իր որոշումը:

Ընդունելիության մասին որոշումները բաժանվում են հետևյալ բաժինների՝

- Փաստերը. գործի կոնկրետ հանգամանքները և համապատասխան ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան,
- Բողոքները. դիմողի՝ Կոնվենցիայի հիման վրա ներկայացվող բողոքների համառոտագիրը, և
- Իրավունքի հարցերը. կողմերի ներկայացրած առարկությունների համառոտագիրը և Դատարանի եզրահանգումները:

Ընդունելիության մասին որոշման մեջ նաև նշվում են պալատի անդամ յոթ դատավորների, ինչպես նաև բաժանմունքի քարտուղարի անունները: Ընդունելիության մասին որոշումներն ընդունվում են միաձայն կամ մեծամասնությամբ (կանոն 56(1)): Մեծամասնությամբ ընդունվելու դեպքում, տարբերվող կարծիքները չեն հրապարակվում (ի տարբերություն Դատարանի վճիռների), չեն բացահայտվում նաև տարբերվող կարծիք հայտնած դատավորների անունները: Անընդունելիության մասին որոշումը բողոքարկելու իրավունք նախատեսված չէ:

Գանգատը կարող է մասնակիորեն ընդունելի/անընդունելի ճանաչվել, ինչի դեպքում հետագա վարույթն ընթանում է միայն ընդունելի ճանաչված հարցերի վերաբերյալ:

2.5.9 Գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն

Համաձայն հոդված 29 (3)-ի՝ Դատարանը կարող է լուծել թե՛ ընդունելիության և թե՛ գործի էության հարցը միաժամանակ⁸⁵: Համաձայն կանոն 54 Ա(1)-ի՝ գործը պատասխանող կառավարությանը ծանուցելիս Դատարանը կարող է որոշում ընդունել՝ քննության առնելու ինչպես ընդունելիության, այնպես էլ՝ գործի էության հարցերը միաժամանակ: Համապատասխանաբար, այդ փուլում կողմերը հրավիրվում են՝ ներկայացնելու արդարացի փոխհատուցմանը և բարեկամական կարգավորմանն առնչվող դիտարկումները: Որպես այլընտրանք, կանոն 54 Ա (3)-ի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում պալատը կարող է որոշել «անմիջապես» անցնել գործի էության հարցով վճռի ընդունմանը, որը ներառում է նաև ընդունելիության մասին որոշումը՝ առանց հետևելու կանոն 54Ա(1)-ի ընթացակարգին⁸⁶: Դատարանն ավելի ու ավելի հաճախ է որոշումներ ընդունում գործի ընդունելիության և էության հարցերը միաժամանակ քննելու վերաբերյալ՝ հիմնականում «կրկնվող խախտումների» մասին գործերի, ինչպիսիք են, օրինակ, դատավարության երկար տևողությանը վերաբերող գործերը, քննությունը արագացնելու նպատակով⁸⁷: Այս պրակտիկան այժմ հեռու է «բացառություն» լինելուց՝ հակառակ հոդված 29 (3)-ի ձևակերպմանը: Իսկապես, Արձանագրություն թիվ 14-ով առաջարկվող փոփոխությունները, որոնց համաձայն *հանձնաժողովների* իրավասությանն է վերապահվում «ակնհայտորեն հիմնավորված» գործերի ընդունելիության և էության հարցերի որոշումը (տես մզեցված տեքստը՝ ստորև) պետք է ավելի կրճատեն այն ժամկետները, որոնց ընթացքում Դատարանը քննում է այդօրինակ գործերը:

Արձանագրություն թիվ 14-ով նախատեսված փոփոխությունները. «Ակնհայտորեն հիմնավորված» գործեր

Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տես բաժին 1.2.2)՝ կոմիտեն իրավասու է գործն ընդունելի ճանաչել և միևնույն ժամանակ ըստ էության վճիռ կայացնել, եթե գործի՝ խնդրո առարկա, Կոնվենցիայի մեկնաբանությանը կամ կիրարկմանն առնչվող

⁸⁵ Տե՛ս, օրինակ, *Ֆերազզինի ընդդեմ Իտալիայի (Ferazzini v Italy)* գործը, թիվ 44759/98, 12.7.01, (2002) 34 EHRR 45: *Կլայնը և այլք ընդդեմ Նիդեռլանդների (Kleyn and others v Netherlands)* գործը, թիվ 39343/98, թիվ 39651/98, թիվ 43147/98 և թիվ 46664/99, 6.5.03, (2004) 38 EHRR 14, կետ 10:

⁸⁶ Տե՛ս, օրինակ, *Կլայնը և այլք ընդդեմ Նիդեռլանդների (Kleyn and others v Netherlands)* գործը, թիվ 39343/98, թիվ 39651/98, թիվ 43147/98 և թիվ 46664/99, 6.5.03, (2004) 38 EHRR 14:

⁸⁷ Տե՛ս, օրինակ, *Սանգլիեն ընդդեմ Ֆրանսիայի (Sanglier v France)* գործը, թիվ 50342/99, 27.5.03:

խնդիրն արդեն որոշված է հաստատված դատական նախադեպով (Արձանագրություն թիվ 14-ի հոդված 8-ը, որով փոփոխության է ենթարկվում հոդված 28-ը): Այս դրույթը ներմուծում է «ակնհայտորեն հիմնավորված» գանգատների (որոնք հայտնի են որպես «կլոն» կամ «կրկնվող խախտումների» գործեր) քննության առավել պարզեցված և արագացված ընթացակարգ:

2.5.10 Ընդդատության զիջում Մեծ պալատին

Խիստ կարևոր հարցեր բարձրացնող գործերի պարագայում պալատը կարող է զիջել ընդդատությունը 17 դատավորից բաղկացած Մեծ պալատին (հոդված 30, կանոն 72-ի համաձայն): Գործի ընդդատությունը կարող է պալատի վճռի ընդունումից առաջ ցանկացած պահի զիջվել Մեծ պալատին հետևյալ երկու իրադրություններից մեկի դեպքում՝

ա. եթե գործը բարձրացնում է այնպիսի լուրջ հարց, որը կարող է անդրադառնալ Կոնվենցիայի (կամ դրա արձանագրությունների) դրույթների մեկնաբանմանը, կամ

բ. եթե վճիռը կարող է հակասել Դատարանի՝ ավելի վաղ կայացրած որոշումներին:

Այդպիսի գործերը, հետևաբար, քննության են առնվում դատավորների առավելագույն լայն կազմով: Հնարավոր է, սակայն, որ գործի կողմերից մեկն «առարկի» ընդդատության զիջման դեմ: Պալատի մտադրության մասին կողմերին ծանուցումից հետո նրանց տրվում է մեկ ամիս՝ ներկայացնելու «պատշաճ կերպով հիմնավորված առարկություններ»՝ համաձայն կանոն 72(2)-ի: Պարզ չէ, սակայն, թե արդյոք կողմի առարկությունը հավասար է ընդդատության զիջում թույլ չտվող ինքնաբերական «վետոյի», թե՛ ոչ: Դատարանի ներկայիս պրակտիկան թույլ է տալիս ենթադրել, որ այս Կանոնն, իրոք, վետոյի իրավունք է տալիս: *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v Turkey)*⁸⁸ գործում, օրինակ, Դատարանը պարզապես ոչինչ է, որ կառավարությունն առարկել է ընդդատության զիջման դեմ, և «դրա հետևանքով» գործը մնացել է պալատի վարույթում. ընդ որում, Դատարանը չի անդրադարձել կառավարության առարկությունների էությանը: Ենթադրվում է, սակայն, որ «պատշաճ կերպով» ներկայացվող առարկության պահանջը իրավունք է վերապահում Դատարանին՝ գնահատելու ներկայացված հիմնավորումները և ըստ այդմ որոշում կայացնելու զիջել ընդդատությունը Մեծ պալատին, թե՛ ոչ. հետևաբար, կողմերին չպետք է տրվի ինքնաբերական վետոյի իրավունք: Ներկայիս պրակտիկան կարող է թույլ տալ կողմին առարկել ընդդատության զիջման դեմ, բայց հետո դիմել գործը Մեծ Պալատ հանձնելու համար՝ համաձայն հոդված 43-ի, եթե կողմը պալատի՝ գործի էությանը վերաբերյալ որոշման հարցում առարկություններ ունի:

2.6 ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական դատարանում գործառվում է երրորդ կողմի մասնակցության հստակ գործող և կարևոր նշանակություն ունեցող պրակտիկա: Համաձայն Կոնվենցիայի հոդված 36-ի՝ Դատարանը կարող է Կոնվենցիայի անդամ պետություններին հրավիրել մասնակցելու լսումներին: Ըստ հոդված 36(1)-ի՝ պետությունն իրավունք ունի միջնորդելու ներկայացնելու գրավոր դիտողություններ և/կամ մասնակցելու այն լսումներին, որտեղ դիմողի դերում հանդես է գալիս իր քաղաքացին⁸⁹: Ավելին, ելնելով «արդարադատությունը պատշաճ կերպով իրականացնելու» շահերից, հոդված 36-ը նաև թույլ է տալիս լսումներին մասնակցելու ցանկացած շահագրգիռ անձի (պետության, անհատի կամ կազմակերպության): Պատասխանող պետությանը ծանուցում հղելուց հետո ցանկացած պահի Դատարանը կարող է թույլատրել երրորդ կողմին՝ ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ, բացառիկ դեպքերում, մասնակցել լսումներին (հոդված 36(2), կանոն 44(2)):

⁸⁸ Թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10, կետ 6:

⁸⁹ Կանոն 44(1). տե՛ս, օրինակ, *Սկոզզարին և Գյունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari & Giunta v Italy)* գործը, թիվ 39221/98 և թիվ 41963/98, 13.7.00, (2002) 35 EHRR 12, կետ 8:

Լսունքներին մասնակցելու ցանկություն ունեցող երրորդ կողմը պետք է պալատի նախագահին գրավոր դիմում ներկայացնի պատասխանող կառավարությանը զանգատի մասին ծանուցում հղելուց հետո 12 շաբաթվա ընթացքում⁹⁰ (կանոն 44(2)(բ)): Այդ դիմումը պետք է «պատշաճ կերպով հիմնավորված» լինի: Եթե դիմումը բավարարվում է, Դատարանն գործնականում միշտ սահմանում է մասնակցության պայմաններ: Այս պայմանները, կարող են վերաբերել գրավոր առարկությունների առավելագույն ծավալին (որպես կանոն, չպետք է գերազանցեն տասը էջը), դրանք ներկայացնելու կոնկրետ ժամկետներին (սովորաբար չորսից վեց շաբաթ) և, որ ավելի կարևոր է, պայմաններ այն հարցերի վերաբերյալ, որոնք կարող են բարձրացվել (երրորդ կողմի) մասնակցության ընթացքում:

Հետևաբար, խորհուրդ է տրվում, որ մասնակցություն հայցող դիմում-նամակը ներառի մանրամասներ (ներառյալ համապատասխան մասնագիտական գիտելիքներն ու փորձը) մասնակցողի մասին, ինչպես նաև այն խնդիրների շրջանակը, որոնց նա պատրաստվում է անդրադառնալ իր պնդումներում: Այդ պնդումներն ուղարկվում են գործի կողմերին, որոնց իրավունք է վերապահվում ներկայացնելու պատասխան առարկություններ, կամ անհրաժեշտության դեպքում վիճարկելու դրանք լսման ընթացքում: Այդ պատասխան առարկություններն ուղարկվում են մասնակից անձին, սակայն վերջինիս, որպես կանոն, լրացուցիչ դիտողություններ ներկայացնելու հնարավորություն չի տրվում:

Դատարանում երրորդ կողմի մասնակցության գործընթացը կարող է օժանդակել՝ հստակեցնելու Կոնվենցիայի անդամ այս կամ այն պետության կողմից առանձին քաղաքականության կամ պրակտիկայի ընդունման գործընթացը: Հաճախ այս ընթացակարգն օգնում է Դատարանին, քանի որ վերջինս համեմատական միջազգային իրավունքի վերաբերյալ նյութեր է ստանում այդ բնագավառում կոնկրետ փորձառություն և գիտելիքներ ունեցող մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններից: Դիմողների համար զգալի օժանդակություն է, եթե մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող նման հեղինակավոր կազմակերպություն իր դիրքորոշումը սատարող դիտողություններ է ներկայացնում (չնայած միշտ չէ, որ դա տեղի է ունենում): Օրինակ՝ 25-ից 30-րդ հավելվածներում կարելի է գտնել երրորդ կողմի մասնակցության տարբեր օրինակներ:

Երրորդ կողմի մասնակցության թույլտվության դիմումները սովորաբար ներկայացվում են գործի էության քննության փուլում: Սակայն հնարավոր է նաև ստանալ երրորդ կողմի մասնակցությամբ հանդես գալու թույլտվություն ընդունելիության մասին որոշման ընդունման փուլում: Օրինակ՝ *Թ. Այ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (TI v UK)*⁹¹ գործն առնչվում էր նախ Գերմանիայում, ապա Միացյալ Թագավորությունում ապաստան ստանալու համար դիմած Շրի Լանկայի քաղաքացուն՝ Գերմանիա արտաքսելուն, ով նախկինում խոշտանգումների էր ենթարկվել Շրի Լանկայում: Դատարանն ընդունեց ինչպես Գերմանիայի կառավարության, այնպես էլ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրավոր նկատառումները:

Արձանագրություն թիվ 14-ով առաջարկվող փոփոխությունները. Գործի քննությանը Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի մասնակցությունը

Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տես, վերը, բաժին 1.2.2)՝ Եվրախորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը կարող է գրավոր դիտողություններ ներկայացնել Դատարան, ինչպես նաև մասնակցել լսմանը (Արձանագրություն թիվ 13-ի հոդված 13, որով փոփոխության է ենթարկվում Կոնվենցիայի հոդված 36-ը): Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը կարող է ներկայիս համակարգի ներքո դիմել մասնակցելու թույլտվության համար, սակայն վերը նշված դրույթը Հանձնակատարին որոշակիորեն վերապահում է այդ իրավունքը:

⁹⁰ Համաձայն կանոն 44(2)(բ)-ի՝ Պալատի նախագահի կողմից «բացառիկ դեպքերում» կարող է այլ ժամկետ նշանակվել: Ժամկետները, «բավարար հիմքեր ներկայացնելու դեպքում», կարող են նաև երկարաձգվել (կանոն 44(3)(բ)): Մեծ Պալատի վարույթում գտնվող գործերում 12 շաբաթվա ժամկետը սկսում է գործել այն օրից, երբ կողմերը ծանուցվում են Մեծ Պալատին ընդդատությունը զիջելու՝ պալատի որոշման մասին կամ, այն օրից, երբ կողմերը ծանուցվում են հանձնախմբի՝ Մեծ պալատին հանձնելու որոշման մասին (կանոն 44(3)(ա)):

⁹¹ Թիվ 43844/98, որոշում 7.3.00:

Երրորդ կողմի մասնակցությամբ վերջին գործերից մի քանիսը՝

- *Դիչանդն ընդդեմ Ավստրալի (Dichand v Austria)*.⁹² գործը. Դատարանը թույլ տվեց մի քաղաքական գործչի մասնակցությունը, որը մամուլում հրապարակված մի հոդվածով քննադատության էր ենթարկվել, ինչի կապակցությամբ ներպետական դատական ատյանը սահմանափակում էր կիրառել:
- *Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Pretty v UK)*⁹³ գործը. Էվթանագիայի կանավորական ընկերությունը և Կաթոլիկ եպիսկոպոսների Անգլիայի և Ուելսի ժողովները, մասնակցել են մի գործի, որտեղ դիմողն ինքնասպանության օժանդակության իրավունք էր պահանջում:
- *Ք.Ք.Ս-ն ընդդեմ Նիդեռլանդների (K.K.C. v Netherlands)*⁹⁴ գործը. Միացյալ ազգերի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը (UNHCR) մասնակցել է (մասնակցել է նաև Ռուսաստանի կառավարությունը) մի գործում, որն առնչվում էր ազգությամբ չէչեն Ռուսաստանի քաղաքացուն Ռուսաստան արտաքսելուն: Դիմողը պնդում էր, որ արտաքսման արդյունքում ինքը կկանգնի խոշտանգումների սպառնալիքի առջև, քանի որ նախկինում ծառայել է «չէչենական բանակում» և հրաժարվել ենթարկվել չէչենական ուժերի վրա կրակ բացելու հրամանին:
- *Բեսարաբիայի մետրոպոլիտ եկեղեցին և այլոք ընդդեմ Մոլդովայի (Metropolitan Church of Bessarabia and others v Moldova)*⁹⁵ գործը. մասնակցության թույլտվություն էր շնորհվել Մոլդովայի մետրոպոլիտ եկեղեցուն մի գործում, որն առնչվում էր Մոլդովայի իշխանությունների կողմից դիմող եկեղեցու պաշտոնական ճանաչումը մերժելուն:
- *Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (A v UK)*⁹⁶ գործը. Ավստրիայի, Բելգիայի, Դոլանդիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Իռլանդիայի Իտալիայի և Նորվեգիայի կառավարությունները մասնակցել են մի գործում, որտեղ դիմողը փորձում էր վիճարկել խորհրդարանական բացարձակ անձեռնմխելիությունը, որը թույլ չէր տալիս իրեն քաղաքացիական վարույթ հարուցել՝ ի պատասխան պառլամենտական վիճաբանությունների ժամանակ պառլամենտի անդամի կողմից արված հայտարարության:
- *Կլայնն ընդդեմ Նիդեռլանդների (Kleyn v Netherlands)*⁹⁷ գործը. Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունները մասնակցել են մի գործում, որն առնչվում էր Նիդեռլանդների պետական խորհրդի Վարչական ընդդատության բաժնի անկախությանը և անաչառությանը:
- *Հաթթոնը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and others v UK)*⁹⁸ գործը. Ինչպես «Երկրագնդի բարեկամներ», այնպես էլ «Բրիտանական ավիաուղիներ» ընկերությունները մասնակցել են մի գործում, որն առնչվում էր Հիթոու օդանավակայանի մոտ բնակվող անձանց անհանգստություն պատճառող օդանավերի բարձրացրած աղմուկի ազդեցությանը:
- *Բրիմանեսկուն ընդդեմ Ռումինիայի (Brimaresku v Romania)*⁹⁹ գործը. մասնակցելու թույլտվություն էր ստացել մի անձ, որը պնդում էր, որ հանդիսանում է պետության կողմից ազգայնացված բնակարանի ներկայիս սեփականատերը: Նա պնդում էր (սակայն ապարդյուն), որ գանգատի բավարարման դեպքում իրեն բնակարանը վերադարձնելու փոխարեն պետք է փոխհատուցում տրամադրվի:

⁹² Թիվ 29271/95, 26.2.02:

⁹³ Թիվ 2346/02, 29.4.02, (2002) 35 EHRR 1:

⁹⁴ Թիվ 58964/00, 21.12.01:

⁹⁵ Թիվ 45701/99, 13.12.01, (2002) 35 EHRR 13:

⁹⁶ Թիվ 35373/97, 17.12.02 (2002) 36 EHRR 917:

⁹⁷ Թիվ 39343/98, թիվ 39651/98, թիվ 43147/98 և թիվ 46664/99, 6.5.03, (2004) 38 EHRR 14:

⁹⁸ Թիվ 36022/97, 8.7.03, (2003) 37 EHRR 28:

⁹⁹ Թիվ 28342/95, 23.1.01, (2001) 33 EHRR 36, կետ 15:

- *Կուա Պուարեսն ընդդեմ Ֆրանսիայի (Koua Poirrez v France)*¹⁰⁰ գործը. Դիմողին որդեգրած հորը թույլ է տրվել մասնակցել մի գործում, որն առնչվում էր դիմողին հաշմանդամ չափահասների համար նպաստ տրամադրելու մերժմանը:
- *Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի (Slivenko v Latvia)*¹⁰¹ գործը. Ռուսաստանի կառավարությունը մասնակցեց մի գործում, որն առնչվում էր ռուսական զորքերը հանելու մասին պայմանագիրը կնքելուց հետո դիմողին Լատվիայից արտաքսելուն:
- *Բլեչիցն ընդդեմ Խորվաթիայի (Blečić v Croatia)*¹⁰² գործը. Բոսնիայի և Հերցեգովինայի ԵԱՀԿ-ի առաքելությունը մասնակցել էր մի գործում, որն առնչվում էր զինված հակամարտությունից հետո դիմողի «հատուկ պաշտպանվող վարձակալության իրավունքին» (տես հավելված 29-ը):

Վերջին տարիներին մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանում տարածված պրակտիկա է իրավունքի, պրակտիկայի կամ քաղաքականության լրջագույն հարցերի վերաբերյալ գրավոր դիտողություններ ներկայացնելու թույլտվության համար Դատարան դիմելը: Դրանցում հաճախ իրադրությունը դիտարկվում է մարդու իրավունքների ոլորտում այլ միջազգային փաստաթղթերի դրույթների (ինչպես, օրինակ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը) կամ Կոնվենցիայի անդամ և ոչ անդամ պետությունների սահմանադրությունների տեսանկյունից: Օրինակ, հասարակական կազմակերպությունները որպես երրորդ կողմ մասնակցել են հետևյալ գործերին՝

- *Մքթենը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (McCann and others v UK)*¹⁰³ գործում «Էմնիսթի ինթրնեշնլի», British Irish Rights Watch, the Committee on the Administration of Justice (CAJ), Justice և Liberty կազմակերպությունների մասնակցությունը մի գործում, որն առնչվում էր այն չափորոշիչներին, որոնք պետությունը միջազգային իրավունքի համաձայն պետք է պահպանի կյանքի իրավունքի բնագավառում:
- *Ջոն Մյուրրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (John Murray v UK)*¹⁰⁴ գործը. «Էմնիսթի ինթրնեշնլը», Justice, British Irish Rights Watch, the Committee on the Administration of Justice (CAJ), մասնակցել են մի գործում, որն առնչվում է դատական մրցակցային համակարգում լռելու և փաստաբաններ ունենալու իրավունքների կարևորությանը՝ Դիպլոքի դատարաններում և միջազգային իրավունքում:
- *Սոնդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Saunders v UK)*¹⁰⁵ գործը. Liberty կազմակերպության մասնակցությունն անդրադառնում էր արդար դատաքննության և ինքն իր դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքներին՝ համաձայն Կոնվենցիայի անդամ այլ պետություններում միջազգային իրավական չափանիշներին և ներպետական, մասնավորապես՝ Հարավային Աֆրիկայի սահմանադրությունների:;
- *Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության (Chahal v UK)*¹⁰⁶ գործում «Էմնիսթի ինթրնեշնլ»-ի միջամտությունը վերաբերում էր *inter alia* Փենջաբի ոստիկանության կողմից վատ վերաբերմունք ցուցաբերելու վտանգի առկայության ապացույցներին: «Չասթիսի», «AIRE» կենտրոնի, Էմիգրանտների բարեկեցության միացյալ հանձնաժողովի (JCWI) և «Լիբերթի» միջամտությունը անդրադառնում էր այն խնդրին, թե անձի կողմից ազգային անվտանգությանը ենթադրաբար սպառնալը, բավարար նկատառում է, երբ անձը խոշտանգման վտանգի առջև է կանգնած, ինչպես նաև արդյունավետ իրավական պաշտպանության պատշաճ ապահովման վրա պետության

¹⁰⁰ Թիվ 40892/98, 30.9.03:

¹⁰¹ Թիվ 48321/99, 9.10.03:

¹⁰² Թիվ 59532/00, որոշում 30.1.03:

¹⁰³ Թիվ 18984/91, Շարք Ա, թիվ 324, 27.9.95, (1996) 21 EHRR 97:

¹⁰⁴ Թիվ 18731/91, 8.2.96, (1996) 22 EHRR 29:

¹⁰⁵ Թիվ 19187/91, 17.12.96, (1997) 23 EHRR 313:

¹⁰⁶ Թիվ 22414/93, 15.11.96, (1997) 23 EHRR 413:

ազգային անվտանգության գործոնի ազդեցությունների և այդօրինակ գործերում հողված 13-ի պահանջների վրա:

- *Տեյշեյրա դը Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի (Teixeira de Castro v Portugal) գործը*.¹⁰⁷ «Justice»-ի միջամտությունը անդրադառնում էր ոստիկանության գաղտնի ծառայողների կողմից հանցագործությունների կատարմանը դրդելուն:
- *Թ-ն և Վ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (T and V v UK)*¹⁰⁸ գործը. ինչպես «Justice»-ի, այնպես էլ՝ (տե՛ս առաջին հրատարակության հավելված 23-ը) սպանված երեխայի՝ Ջեմի Բալչերի, ծնողները Դատարանի կողմից գրավոր նկատառումներ ներկայացնելու թույլտվություն էին ստացել: Բացի այդ, ծնողներին թույլտվություն էր շնորհվել՝ մասնակցելու լսմանը և ներկայացնելու իրենց բանավոր պնդումները (իրենց իրավաբանական ներկայացուցիչների միջոցով):
- *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Khan v UK)*¹⁰⁹ գործը. «Justice»-ին և «Liberty»-ին թույլատրվել էր ներկայացնել համատեղ առարկություններ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների ընդունելիության վերաբերյալ:
- *Շանահանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)*¹¹⁰ գործը. Հյուսիսային Իռլանդիայի մարդու իրավունքների հանձնաժողովը նկատառումներ էր ներկայացրել կյանքի իրավունքի միջազգային չափորոշիչների վերաբերյալ (օրինակ՝ Մարդու իրավունքների Միջամերիկյան դատարանը և Մարդու իրավունքների կոմիտեն):
- *Չափմանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Chapman v UK)*¹¹¹ գործը. Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնի միջամտությունը հղում էր պարունակում գնչուներին առնչվող միջազգային փաստաթղթերին և նյութերին (ներառյալ ԵԱՀԿ-ի Ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի զեկույցները՝ վերնագրված «Ձեկույց ԵԱՀԿ-ի տարածաշրջանում գնչու և սինթի ազգերի վիճակի վերաբերյալ», բաժին 7.4.00):
- *Պելլեգրինին ընդդեմ Իտալիայի (Pellegrini v Italy)*¹¹² գործը. «AIRE» կենտրոնը միջամտել էր մի գործով, որն առնչվում էր Վատիկանի դատարանների կողմից եկեղեցական իրավունքի հիման վրա անցկացվող վարույթների արդյունքում կայացված որոշումները կատարելու՝ Իտալական դատարանների որոշմանը, որը, ինչպես ապացուցեց դիմողը, հակասում էր հողված 6-ին:
- *Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի (Nikula v Finland)*¹¹³ գործը. «Interrights»-ի միջամտությունը վերաբերում էր այն հարցին, թե որոնք են դատարանում իրենց պաշտպանյալներին ներկայացնելիս հայտարարություններ անելու ժամանակ փաստաբանների անձեռնմխելիության սահմանները (անդրադառնալով Եվրախորհրդի այլ պետությունների, Ավստրալիայի, Կանադայի և Հարավային Աֆրիկայի դիրքորոշումներին):
- *Սթաֆֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Stafford v UK)*¹¹⁴ գործը. «Justice»-ը միջամտել էր մի գործում, որն առնչվում էր մարդասպանության համար ցմահ բանտարկության դատավճռի պարտադիր կատարմանը և տուրքերի ու ազատ արձակման համակարգին:

¹⁰⁷ Թիվ 25829/94 , 9.6.98, (1999) 28 EHRR 101:

¹⁰⁸ Թիվ 24724/94 և թիվ 24888/94, 16.12.99, (2000) 30 EHRR 121:

¹⁰⁹ Թիվ 35394/97, 12.5.00, (2001) 31 EHRR 45:

¹¹⁰ Թիվ 37715/97, 4.4.00:

¹¹¹ Թիվ 24882/94, 18.1.01, (2001) 33 EHRR 18 (տե՛ս նաև *Կոստան ընդդեմ Միացյալ Թագավորության (Coster v UK)* գործը, թիվ 24876/94, 18.1.01, (2001) 33 EHRR 20: *Բիրդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Beard v UK)* գործը, թիվ 24882/94, 18.1.01, (2001) 33 EHRR 19: *Լին ընդդեմ Միացյալ Թագավորության (Lee v UK)* գործը, թիվ 25289/94, 18.1.01, (2001) 33 EHRR 29: *Ջեյն Սմիթն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jane Smith v UK)* գործը, թիվ 25154/94, 18.1.01, (2001) 33 EHRR 30):

¹¹² Թիվ 3088/96, 20.7.01, (2002) 35 EHRR 2:

¹¹³ Թիվ 31611/96, 1.3.02, (2004) 38 EHRR 45:

¹¹⁴ Թիվ 46295/99, 25.5.02, (2002) 35 EHRR 32:

- *Կարներն ընդդեմ Ավստրիայի (Karner v Austria)*¹¹⁵ գործը. «ILGA-Europe»-ը (Միասեռականների միջազգային ասոցիացիայի եվրոպական բաժինը), «Liberty»-ն և «Stonewall»-ը միջամտել են մի գործում, որն առնչվում էր միասեռականի կողմից իր զուգընկերոջ վարձակալության իրավունքը ժառանգելու իրավունքի մերժմանը (տե՛ս հավելված 28-ը):
- *Քինգսլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kingsley v UK)*¹¹⁶ գործը. «Liberty»-ին միջամտել էր՝ պնդելով, որ այն դեպքերում, երբ խախտվում է 6-րդ հոդվածը, Դատարանը պետք է դիմողին ոչ նյութական վնասի փոխհատուցում տրամադրի (այլ ոչ թե մերժի փոխհատուցման տրամադրումը՝ պարզապես կրկնելով իր մանթրան, որ անհնար կլիներ կանխատեսել, թե ինչի պահին կլինեն ներպետական վարույթների արդյունքը, եթե հոդված 6-ը չխախտվեր):
- *Ուիլսոնը «ՆՍՋ»-ին և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Wilson, NUJ and others v UK)*¹¹⁷ գործը. «Liberty»-ին և Արհմիությունների կոնգրեսը (TUC) համատեղ միջամտել են մի գործում, որն առնչվում էր այն ներպետական օրենսդրությանը, որը թույլ էր տալիս աշխատողներին դուրս գալու արհմիություններից (տե՛ս հավելված 26-ը):
- *Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում (Goodvin v UK)*¹¹⁸ «Liberty»-ին միջամտել է՝ ներկայացնելու ապացույցներ տրանսսեռականների իրավական ճանաչման միջազգայնորեն շարունակվող միտման վերաբերյալ (տե՛ս հավելված 27):
- *Մամատկուլովը և Աբդուռասուլովիչն ընդդեմ Թուրքիայի (Mamatkulov and Abdurasulovic v Turkey)*¹¹⁹ գործը. Իրավաբանների միջազգային հանձնաժողովը (ICJ) միջամտել է մի գործում, որն առնչվում էր երկու ուզբեկ քաղաքացիների էքստրադիցիային, որոնց մահապատիժ էր սպառնում: Հանձնաժողովի միջամտությունը անդրադառնում էր այն հարցին, թե արդյոք Դատարանի կողմից մատնանշված գանգատի ապահովման միջոցները պետք է պարտադիր կատարման ենթակա լինեն (տե՛ս հավելված 25-ը):
- *Մ.Ս-ն ընդդեմ Բուլղարիայի (MC v Bulgaria)*¹²⁰ գործը. «Interrights»-ը միջամտել է մի գործում, որն առնչվում էր բռնաբարության նախաքննության և քրեական վարույթի անցկացման կարգը սահմանող Բուլղարիայի օրենսդրության թերություններին (տե՛ս հավելված 30-ը):
- *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)*¹²¹ գործը. Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը միջամտել է մի գործում, որով ոստիկանները սպանել էին երկու գնչու տղամարդու՝ նրանց ձեռքակալելու փորձի ընթացքում:

Ի լրումն՝ «Interrights»-ը և/կամ «Article 19»-ը, հաճախ որպես երրորդ կողմ, Դատարանին իրենց նկատառումներն են ներկայացրել արտահայտվելու ազատությանը վերաբերող գործերով, ինչպիսիք են, օրինակ, *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v Austria)*¹²², *«Քաջ դուռը և Դուբլինի առողջ կանայք» ընդդեմ Իռլանդիայի (Open Door and Dublin Well Woman v Ireland)*,¹²³ *«Ինֆորմացիոն սվերեին» և այլոք ընդդեմ Ավստրիայի» (Informationsverein Lentia and others v Austria)*,¹²⁴ *Օտտո Պրեմինգերի ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի (Otto Preminger Institut v*

¹¹⁵ Թիվ 40016/98, 24.7.03, (2004) 38 EHR 24:

¹¹⁶ Թիվ 35605/97, 28.5.02, (2002) 35 EHR 10:

¹¹⁷ Թիվ 30668/96, թիվ 30671/96 և թիվ 30678/96, 2.7.02, (2002) 35 EHR 20:

¹¹⁸ Թիվ 28957/95, 11.7.02, (2002) 35 EHR 18: «Լիբերթին» նաև միջամտել է *Շեֆֆիլդը և Հորշամն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sheffield and Horsham v UK)* գործը, թիվ 22985/93 և թիվ 23390/94, 30.7.98, (1999) 27 EHR 163:

¹¹⁹ Թիվ 46827/99 և թիվ 46951/99, 6.2.03:

¹²⁰ Թիվ 39272/98, 4.12.03:

¹²¹ Թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04:

¹²² Թիվ 9815/82, Շարք Ա, թիվ 103, 8.7.86, (1986) 8 EHR 407:

¹²³ Թիվ 14234/88 և թիվ 14253/88, Շարք Ա, թիվ 264, 29.10.92, (1993) 15 EHR 244:

¹²⁴ Թիվ 13914/88, թիվ 15041/89, թիվ 15717/89, թիվ 15779/89 և թիվ 17207/90, 24.11.93, (1993) 17 EHR 93:

Austria),¹²⁵ *Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության (Goodwin v UK)*¹²⁶ և *Ինկալն ընդդեմ Թուրքիայի (Incal v Turkey)*¹²⁷ գործերը:

¹²⁵ Թիվ 13470/87, Շարք Ա, քիվ 295-Ա, 20.9.94, (1995) 19 EHRR 34:

¹²⁶ Թիվ 28957/95, 11.7.02 (2002), 35 EHRR 18:

¹²⁷ Թիվ 22678/93, 9.6.98, (2000) 29 EHRR 449: